№ 3 ՈՒՐԲԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ 20

1909

ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ 20 № 36

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ԵՂԲ. Ա. ԵՒ ԵՍ. ԱՃՎԱՆԴԻ

խանութում, Գօլօվինսկի պրօսպեկտի վրա

Առևտուրը դադարեցնելու պատճառով

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔ

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՍՊԻՏԱԿԵՂԷՆ	ՍԵՂԱՆԱՏԱՆ ՍՊԻՏԱԿԵՂԷՆ	ԿԱՆԱՆՑ ՍՊԻՏԱԿԵՂԷՆ
40% զեղչով	և	Մինչև 35% զեղչով
✦ ԿԱՆԱՆՑ ՍՊԻՏԱԿԵՂԷՆ ✦	✦ ՔԱԹԱՆ ✦	✦ ԳՈՒԼԳԱՆՆԵՐ ✦
40% զեղչով	Մինչև 30% զեղչով	Մինչև 40% զեղչով

Կանանց բլուզներ՝ մետաքսից և բրդից
50% զեղչ և աւելի
Վերմակներ՝ ատլասի, պիկէի և բրդէ՝
Մինչև 40% զեղչ

128. 0—3

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ

1909 Թւի փետրվարի 24-ին, ի նպաստ մահմեդական երկու Բարեգործական Ընկերութիւնների Թիֆլիս քաղաքում կը կայանայ

ՊԱՐԵՐԵԿՈՅԹ

Կօնցէրտային բաժանմունքով

Դահլիճը շքեղ կերպով զարդարված կը լինի պարսկական ճաշակով. կը լինեն քեօսկներ շամպանիայով, ծաղիկներ, կօնֆէտտիներ և այլն: Երեկոյթի, համար յատուկ հրաւիրված են՝ 1) սազանդարներ. 2) առանձին վրանում կը լինեն հնդկական հռչակաւոր դերվիշ ֆրէնօլօգ Մ. Ի. ԿԷԱՆ գուշակողի սէանսները, որը գուշակում է թէ անցեալ և թէ ապագայ կեանքը: Նա ինքն ցոյց կը տայ հիպնօտիզմի և մտքերի ներշնչման մի քանի սէանսները: Սկիզբն է երեկոյեան ժամը 9-ին: Տոմսակներն արժեն 2 ր. 10 կ. և ծախվում են. 1) Թիֆլիսի պարսից հիւպատոսի դիւանատանը (Բէբուտօվսկայա 32), 2) Մահմեդական Բարեգործական Ընկերութեան նախագահ փոխ-գնդապետ պ. Վէքիլովի մօտ, 3) երեկոյթը կազմող տիկ. Թաղիեվի մօտ (Կրիլօվսկայա, սեփ. տուն), 4) իսկ երեկոյթի օրը դահլիճի մուտքի մօտ: Ֆրակները պարտաւորական չեն: Երեկոյթի կազմողն է պրինցուհի Մէլէքսիմա-Խանում տիկ. Թաղիեվը: Երեկոյթի պատասխանատու կարգադրիչն է պարսկական ընդհանուր հիւպատոսի քարտուղար պրինց Նադիր Միրզան:

(ու. կ. ե.) ա. 151. 3--1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Թիֆլիսի Ժողովարանի Աւագների Խորհուրդը հրաւիրում է ցանկացողներին ստանձնել Մայերի այգում կառուցվող Ժողովարանի ամարային շինութեան ներկարարական աշխատանքը: Յայտարարութիւնները՝ վերջնական գների հետ միասին՝ ներկայացնել Ժողովարանի գրասենեակը (Ժողովարանի ձմերային շինութիւն) մինչև մարտի 1-ը: Այդ աշխատանքի տեխնիկական պայմանները և մօտաւոր քանակի ու պահանջվող միանուագ գնի տեղեկագիրը կարելի է տեսնել Ժողովարանի գրասենեակում ամեն օր, ցերեկվայ ժամը 1-ից մինչև 3-ը և 8-ից մինչև 11-ը երեկոյեան: (ա) 146. 1—1

Թիֆլիսի Ժողովարան

Աւագների Խորհուրդը յայտնում է ի գիտութիւն Ժողովարանի անդամների, որ փետրվարի 20-ին նշանակված է

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

հետևեալ հարցերը քննելու համար.

1) Քննութիւն և հաստատութիւն 1909 թ. նախահաշւի,
2) Քննութիւն և հաստատութիւն գրադարանը կառավարելու համար կազմված հրահանգի, և
3) Քուէարկութիւն Ժողովարանի համար կանդիդատներ առաջարկված անձերի:

Ընդհանուր ժողովի սկիզբն է երեկ. 9 ժամին

(11, 20) (տռ.) 125. 2—2

ԹԻՖԼԻՍԻ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(ամբուլատորային ընդունելութիւն)

եկող հիւանդների համար ամեն օր, Վօկզալնայա 8, տ. Էնֆիաճեանցի:
Տելեֆօն 695

Ե. Գ. ՖԷԴՕՐՕՎ ամեն օր, բացի չորեքշաբթի և կիրակի օրերից, 8½-ից մինչև 9½, ներքին հիւանդ.:

Վ. Դ. ԳԱՄԲԱՇԻՁԷ ամեն օր, բացի կիրակի օրերից, 11—12 ժամը, ներքին և երեխաների:

Բ. Ա. ՊՕՊՕՎԵԱՆ երկուշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ 12—1 ժամը, կոկորդի քթի և ականջի:

Գ. Մ. ՄԱԿԱՐԵԱՆ երեքշ. և ուրբաթ օրերը 12—1 ժ., ներքին:

Ա. Ն. ԴԻԱՍԱՄԻՁԷ ամեն օր, 11½-ից մինչև 12½ ժ., սիֆիլիս և կաշուէ հիւանդութիւններ:

Ն. Մ. ՄԵԼԻՔՕՎ ամեն օր, խիրուրգիական և կանանց հ. 1—2 ժամը:

Ի. Դ. ԳՕՄԱՐԹԷԼԻ ամեն օր, ներքին և երեխաների, 2—3 ժամը:

Բ. Ս. ՄՈՒՍԽԷԼՕՎ ամեն օր, բացի կիրակի օրերից, 2—2½ ժ., աչքի հիւանդ.:

Հիւանդանոցում կատարվում են միկրօսկօպիական, բակտէրիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս ծաղիկի պատուաստում և ծծմայրերի քննութիւն: Վճար խորհրդի համար 50 կօպէկ:

Օպերացիաները և խորհրդատուութիւնը ըս տամաձայնութեան:

Շուտով բացվելու է ստացիօնարական բաժանմունք 30 մահճակալներով:

(օ. մ.) ա. 38. 100—27

ՍՊԱՍՈՒՄ Է ԻՐ ԼՈՒԾՄԱՆ

Շուտով յիսուն տարին կանցնի այն օրից, երբ Ռուսաստանը ազատութիւն տուեց ներքին նահանգների իր գիւղացիներին, յատկացնելով նրանց անձեռնմխելի կերպով հողաբաժիններ:

Երէկ, փետրվարի 19-ին, այդ օրվայ տարեդարձն էր:

Այդ յիշատակելի օրը իր գեղեցիկ ներշնչումների հետ բերում էր և տխուր մտածմունքներ:

Եւ յիրաւի փետրվարի 19-ը մինչև այժմ չը գտաւ իրան յաջորդող նոյնպիսի նշանաւոր օրեր, որոնք լրացնէին նրա նախաձեռնած խոշորագոյն գործը:

Եւ օրինակ՝ մեր Անդրկովկասը մինչև այժմ չէ կազմակերպել գիւղացիական հողերի այն ապահովութեան գործը, որը կէս դար սրանից առաջ իրագործվեց հիւսիսային շրջաններում:

Ճիշդ է, այդ խնդիրը գրված է կովկասեան Փոխարքայի ծրագրած կովկասեան բարենորոգութիւնների ցուցակի մէջ, բայց յայտնի չէ, թէ երբ նա կը ստանայ իր լուծումը և արդեօք նա կը վճռվի այնպիսի եղանակով, որ շուտով անհետացած լինեն անցեալ կարգերի ճնշող ծանրութիւնը և տանջող տնտեսական կաշկանդումները:

Հողային յարաբերութիւնների անկախ դրութիւնը, երկրագործ աշխատաւորի անինքնուրոյն վիճակը, հողային տուրքերի հաւաքման վիրաւորական եղանակը վաղուց դատապարտել են անցեալից մեզ ժառանգութիւն թողած այն կարգը, որ յայտնի է Անդրկովկասում «ժամանակաւոր պարտաւորեալ յարաբերութիւններ» անունով:

Այդ յարաբերութիւնները «ժամանակաւոր» ածականով ձգտել են մեղմացնելու իրանց մէջ պարունակած վշտալի բովանդակութեան ծանր տպաւորութիւնը, բայց մի գժտութիւն, որ քառասուն տարուց աւելի շարունակվում է մեր իրականութեան մէջ, չէ կարող վարագուրվել և սփոփվել «ժամանակաւոր» խօսքով:

Կովկասեան Փոխարքայի նախաձեռնած բարեկարգութեան ծրագիրը դեռ չէ քննվել Պետական Դումայում և հաւանական է, որ չի քննվի նրա ներկայ նստաշրջանում:

Եթէ աջողվէր գոնէ աշնան նստաշրջանում դարձնել նրան քննութեան առարկայ և պատրաստել նիւթեր նրա աջող և խելացի լուծման համար, դա կը լինէր մի դրական քայլ:

Իսկ կովկասեան պատգամաւորները: Արդեօք նրանք պատրաստել են իրանց կողմից ծրագիրներ:

Ա. Քալանթար

ՍԵՐԲԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Բուդապեշտ, 18 փետրվարի

«Պեստէր Լօյդին» հաղորդում են Վիէննայից. «Եթէ Սերբիան, հետևելով մեծ պետութիւնների կամ միայն Ռուսաստանի խորհրդին, յանուն խաղաղութեան կը տայ Աւստրօ-Ունգարիայի պահանջած վստահացումները, այն ժամանակ Աւստրօ-Ունգարիան պատրաստ է Սերբիայի հետ ուղղակի բանակցութեան մէջ մտնել: Երբ նրանց միջև համաձայնութիւն կայացվի, Եւրոպան նկատի կառնէ այդ թէ կոնֆերենցիայի ժամանակ և թէ առանց նրան»: (Հ.Գ.)

Լոնդոն, 18 փետրվարի

Համայնքների պալատում Գրէյը, պատասխանելով այն հարցապնդումին՝ թէ Անգլիան քայլեր արե՞լ է, արդեօք, խաղաղ ճանապարհով վերջ տալու Աւստրիայի, Սերբիայի և Չերնօգորիայի միջև ծագած միջադէպին, ասաց. «Վերջին ժամանակս մեծ պետութիւնների միջև, հաշւելով և Անգլիային, տեղի էր ունենում մտքերի փոխանակութիւն, որ ուղղված էր գործը խաղաղութեամբ լուծելուն: Բանակցութիւնները կրում էին ոչ պաշտօնական բնաւորութիւն»: (Հ. Գ.)

Պարիզ, 18 փետրվարի

«Տանը», յենվելով Վիէննայից ստացված տեղեկութիւնների վրա, ցաւ է յայտնում, որ Աւստրօ-Ունգարիան այդպիսի քիչ նախազգուշութիւն է երևան հանում Սերբիայի վերաբերութեամբ: Լրագիրն ասում է, որ Աւստրօ-Ունգարիան պէտք է նկատի առնէ, որ այսուհետև նա պատասխանատու է հանդիսանում եւրօպական խաղաղութեան համար:

Նոյն ոգով են խօսում նաև միւս լրագիրները: (Հ. Գ.)

Լոնդոն, 18 փետրվարի

Րէյտերի գործակալութիւնը պաշտօնական աղբիւրից տեղեկացաւ, որ, հակառակ բուլղարական հեռագրի, որ ստացվեց Վիէննայում, սերբիական կառավարութիւնը հրաժարվել է տերրիտօրիալ վիճումների պահանջներից: («Հ. Գ.»)

Վիէննա, 17 փետրվարի

«Կոր. Բիւրօյին» հեռագրում են Բելգրադից. «Ռուսաց դեսպանը այցելեց արտաքին գործերի մինիստրին և ռուսաց կառավարութեան յանձնարարութեամբ հաղորդեց, որ կառավարութիւնը բարեկամական խորհուրդ տուեց Սերբիային հրաժարվել տերրիտօրիալ վարձատրութիւն ստանալուց և Բօսնիայի համար աւտօնօմիա պահանջելուց, որովհետև այդ պահանջներին մեծ պետութիւնները աջակցութիւն ցոյց չեն տայ:

Ապա արտաքին գործերի մինիստրին այցելեցին Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Իտալիայի դիպլօմատիական ներկայացուցիչները և նոյն տեսակ խորհուրդ տուին:

Դրանից յետոյ Թագաւորի նախագահութեամբ կայացած մինիստրների խորհրդի նիստը միաձայն որոշեց պատասխանել, որ Սերբիան չէ կարող յետ վերցնել այն պահանջները, որոնք պարզված են սկուպշչինայի յայտնի որոշման մէջ. Սերբիան դեռ կրկին յոյս է տածում Եւրոպայի արդարադատութեանը, սակայն տերրիտօրիալ պահանջներից, և Բօսնիայի ու Հերցեգովինայի աւտօնօմիայի պահանջից չէ կարող հրաժարվել: (Հ. Գ.)

Վիէննա, 18 փետրվարի

Կառավարական կօմիսարը կարդաց բօրսայում, իսկ յետոյ երեկոյեան լրագիրները առանց կօմենտարիաների տպեցին հետևեալը. «Սերբիական մինիստրների խորհուրդը մերժեց ռուսական բարեկամական խորհուրդը, որին աջակցում էին նաև մեծ պետութիւնները և որոշեց չը հրաժարվել տերրիտօրիալ վարձատրութիւնից և Բօսնիայի աւտօնօմիայից»:

Բօրսան անցաւ լքեալ տրամադրութեամբ:

Սկսվեց պետական դաւաճանութեան Զագրէբի գործի քննութիւնը: Կարծում են, որ քննութիւնը կը տևէ երկու ամիս: Պաշտպանեալների վկաների թիւը մօտ երեք հարիւր մարդի է հասնում: Քաղաքում հանգիստ է:

(Հ. Գ.)

«Ֆօսսիշէ Ցայտունգին» հաղորդում են Անկօնիից, որ արդէն մի քանի օր է, ինչ Իտալիայում գտնվող երեք սերբ օֆիցերներ բանակցութիւններ են վարում իրրեդենտիստների հետ:

Բանակցութիւնների նպատակն է մշակել մի ծրագիր, որպէսզի պատերազմ յայտարարելու դէպքում անկարգութիւններ կազմակերպվեն Աւստրիայի իտալական քաղաքներում և մի շարք մահափորձեր կատարվեն բարձրաստիճան անձանց դէմ Վիէննայում:

ԵԶԻԴԻՆԵՐԻ ՀՈՎԻԱՊԵՏ ՄԻՐ-ՇԷՅԽ-ԻՍՄԱՅԻԼԸ ՓՈԽԱՐՔԱՅԻ ՄՈՏ

Երէկ, փետրվարի 19-ին, եզիդիների հովւապետ Միր շէյխ-Իսմայիլը ներկայացաւ Կովկասեան Փոխարքային:

Նրա հետ էին Թիֆլիսի Թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեան և Եփրեմ վարդապետ Սուքիասեան:

Թարգմանում էր Ա. Քալանթար: Ներկայ էին գնդապետ Ա. Լազարեան և մի քանի պաշտօնեաներ:

Փոխարքան ընդունեց Միր-Իսմայիլին Դեղին դահլիճում:

Միր-Իսմայիլը ողջունելով Փոխարքային ցանկացաւ նրան քաջառողջութիւն:

Փոխարքան շնորհակալութիւն արեց:

Ապա Միր-Իսմայիլը, դիմելով Փոխարքային և նկարագրելով կովկասեան եզիդիների դրութիւնը, յայտնեց հետևեալը.

«Այցելելով կովկասեան եզիդիներին, ես նկատեցի, որ նրանք համահաւասար միւս ազգութիւնների հետ վայելում են օրէնքի հովանաւորութիւնը և անաչառ վերաբերմունքը: Ես պարտք համարեցի այդ առիթով անձամբ արտայայտել իմ և իմ հօտի շնորհակալական զգացմունքները դէպի Ձեզ, իբրև Կայսրի ներկայացուցչի: Իմ ժողովուրդը կարիքներ շատ ունի և ես կը ցանկանայի, որ նա ևս նոյնպէս բարգաւաճ ապրի, ինչպէս միւս ազգերը, կարողանայ հարստանալ, կրթվել և ազդեցիկ մարդիկ ունենալ: Իմ այցելութիւնների միջոցին ես տալիս եմ իմ հօտին խրատներ և ցուցումներ, բայց ես ժամանակաւոր հիւր եմ և պէտք է վերադառնամ մի քանի ժամանակից յետոյ իմ մշտական բնակութեան տեղը: Ուստի ես նշանակել եմ այստեղ մի փոխանորդ, որ իրագործէր իմ ցանկութիւնները: Այդ փոխանորդն է Իւսուֆ-բէգ Թէմուրովը, որին բացատրել եմ իմ դիտաւորութիւնները: Ես յոյս ունեմ, որ Դուք կաջակցէք թէ ինձ և թէ իմ փոխանորդին հասնելու մեր բարի նպատակներին, վերցնելով Ձեր հովանաւորութեան տակ եզիդի ժողովրդին»:

Վերջացնելով իր խօսքը՝ Միր-Իսմայիլը մատուցեց մի գրութիւն, որի մէջ յայտնված էին ամփոփ կերպով նրա ցանկութիւնները:

Փոխարքան՝ կարդալով գրութիւնը և լրացուցիչ տեղեկութիւններ ստանալուց յետոյ՝ յայտնեց, որ նա ուրախ է, լսելով Միր-Իսմայիլի բարի ցանկութիւնները և իր կողմից կանէ այն բոլորը, ինչ որ կարելի է: Ռուսաստանում եզիդիները միշտ վայելել են օրէնքի հովանաւորութիւնը ուրիշ ազգերի հետ համահաւասար և նոյնը կը լինի ապագայում: Կրթութեան գործի մասին պէտք է հոգատար լինեն և իրանք եզիդիները, իսկ կառավարութիւնը կաջակցէ, ինչով հնարաւոր կը լինի:

Այնուհետև Փոխարքան դիմեց դահլիճում շարեշար կանգնած մօտ 50 հոգի եզիդիների ներկայացուցիչներին և հարց ու փորձեր արեց նրանց կենցաղավարութեան մասին:

Միր-Իսմայիլը ներկայացաւ նաև Փոխարքայի ամուսին կոմսուհի Ելիզավետա Անդրէեվնային, բարեմաղթեց նրան բաղդաւորութիւն: Կոմսուհին յայտնեց շնորհակալութիւն:

Այցելութիւնը տևեց կէս ժամ:

Եզիդիների վրա Փոխարքայի ընդունելութիւնը թողեց շատ լաւ տպաւորութիւն:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թեհրան, 30 յունվարի

Յեղափոխականների ապստամբութիւնը և նահանգապետի սպանութիւնը Ռաշտում, որ կատարվեց յունվարի 26-ին, կայծակի հարուածի նման ցնցեց Թեհրանի կառավարութեանը, որ Մահարրամի ծոմապահութեան առիթով զբաղված էր թատրոնական ներկայացումներով և անհոգ կերպով մտածում էր, որ իրերի դրութիւնը Պարսկաստանում ամենևին այնքան էլ անյուսալի ու վատ չէ։ Մոտեցող փոթորիկի այդ որոտը մայրաքաղաքի ազգաբնակութեան կողմից ընդունվեց իբրև ազդանշան ապստամբութեան և քնած Թեհրանցիների մէջ առաջ բերեց բացարձակ բերկրանքի ու բաւականութեան զգացմունք։

Ռաշտը, որ Հիւսիսային Պարսկաստանի կարևոր առևտրական քաղաքն է, Էնզելի նաւահանգստից և Կասպից ծովից գտնվում է 35 վերստ հեռաւորութեան վրա, և Թեհրանից՝ 337 վերստի վրա. մոտ 100 հազար ազգաբնակութիւն ունի և Գիլան հարուստ գաւառի ամենագլխաւոր քաղաքն է։ Ռաշտը կարելի է Թեհրանի և ամբողջ Պարսկաստանի դարպասը համարել, որը տանում է դէպի Ռուսաստան և Եւրօպա, որովհետև նա ընկած է Պարսկաստանի և Ռուսաստանի միջև եղած առևտրական ճանապարհի վրա և միջազգային պոստային և ճանապարհորդական հաղորդակցութիւնը անցնում է Ռաշտի վրայով։ Ռուս ինժեներների շինած Էնզելի-Թեհրան խճուղին անցնում է դարձեալ Ռաշտով։

Յեղափոխականների կողմից Ռաշտը գրաւելու մանրամասնութիւնները, տեղական ռուսաց հիւպատոս Ա. Ն. Շտրիտտերի տուած զեկուցման համաձայն, հետևեալներն են.

Յեղափոխական խլրտումները միշտ էլ եղել են Ռաշտում և որևէ պայթիւնի վաղ թէ ուշ պէտք էր սպասել։ Նահանգապետ Սարդար-Աֆհամը, որ նշանակված էր Ռաշտ մի տարի սրանից առաջ և կարճ ժամանակամիջոցում հռչակ ստացաւ իր անյագ կաշառակերութեամբ, բռնութիւններով և ապօրինութիւններով ու ատելի դարձաւ ամբողջ ազգաբնակութեանը, անհոգ կերպով թղթախաղով էր զբաղված իր մտերիմ Սարդար-Հիւմայունի այգում։

Պարսիկների և ռուսական կովկասցիների զինված ամբոխը ներս խուժեց այգին և, ռումբ նետելով, գազանաբար սպանեց նահանգապետին և ուրիշ երեք պաշտօնեաների, ձեռք չը տալով տանտիրոջը և տան մնացեալ բնակիչներին։

Ապա 200 հոգուց բաղկացած ամբոխը յարձակվեց նահանգապետի տան վրա, դուրս հանեց նրա ընտանիքի անդամներին, որոնց ևս ձեռք չը տուեց, և կողոպտելուց յետոյ հրդեհի ճարակ դարձրեց ամբողջ տունը։ Հրդեհի ժամանակ վնասվեցին հարևան տները, պոստատունը, հեռագրատունը և դատարանը։ Գնդակաձգութեան միջոցին մոտ 15 հոգի վիրաւորվել ու սպանվել են։

Յեղափոխականները, որոնց գլխաւոր ղեկիչներն ու գործակիցները, ըստ երևոյթին, մեր կովկասցի եկւորներն էին, գրաւեցին զինանոցը և բոլոր թնդանօթները, կազմեցին անջուման, որի ղեկավար ընտրվեց ինչ-որ Մօիզ-ուս-Սալթանէ։ Դրանից յետոյ յեղափոխականները տեղեկացրին ռուսական հիւպատոսին, որ իրանց գլխաւոր նպատակն է «պահպանել ռուսահպատակների կեանքի ու ստացուածքի անձեռնմխելիութիւնը, նմանապէս և Ռաշտի այն բոլոր բնակիչների, որոնք ոչ մի առընչութիւն չունեն շահի ու նրա կառավարութեան հետ, որովհետև նրանք ձգտում են միայն սահմանադրութիւն ձեռք բերել և կը ցանկանային, որպէսզի նրանք չը խանգարէին Պարսկաստանի համար այդ բարի գործը գլուխ բերելու»։

Հրդեհից վնասվել են մի քանի մասնաւոր տներ։ Կողոպուտներ կամ մահափորձեր տեղի չեն ունեցել։

Յարձակումը նահանգապետի վրա կատարվեց այնքան անսպասելի կերպով, որ ոչ բրիգադայի կօզակները, որոնց թիւը իրանց օֆիցերի հետ միասին Ռաշտում հասնում է 23-ի, ոչ էլ նահանգապետի զինւորները ժամանակ չունեցան նոյնիսկ հաւաքվելու, որպէսզի նահանգապետին պաշտպանեն, և շտապեցին թագնվել ռուսական հիւպատոսարանում։ Այնտեղ գնաց իր ազգականներով ու շքախմբով նաև Թալըշի նահանգապետ Սարդար-Ամջեդը, որը աշնանից մինչև այժմ չէ համարձակված իր պաշտօնատեղին գնալ, որովհետև Թալըշցիները չեն ուզում թոյլ տալ իրանց մոտ գալու մի այդպիսի կաշառակեր և կողոպտիչ մարդու։ Վերջինիս հարուստ կալուածքը Թալըշում հրդեհել էր ժողովուրդը, և երբ Գիլանի ներկայումս սպանված նահանգապետ Սարդար Աֆհամը գնաց ճնշելու անհնազանդ Թալըշցիներին, վերջիններս նրան վռնտեցին և 50 վերստ հալածեցին նրա զինւորներին, խլելով նրանց հրացանները, թնդանօթները և ռազմամթերքը։

Նահանգապետի սպանութիւնից մի քանի ժամ յետոյ Ռաշտը խաղաղվեց, կարծես ոչինչ չէր պատահել, և կարգը այլևս չը խանգարվեց։ Բագուից յաջորդ օրը շոգենաւով Էնզելի բերված ռուսական, պարսկական և միջազգային պոստը անփորձ հասաւ Ռաշտ և այնտեղից էլ անխաս անցաւ Թեհրան։

Որովհետև հեռագրատունը Ռաշտում հրդեհից վնասվել էր և հաղորդակցութիւնը ընդհատվել, ուստի ռուսաց հիւպատոսը պատահաբար անցքերի մասին կարողացաւ յայտնել Թեհրան միայն Էնզելի-Թեհրանեան ճանապարհի տելէֆոնով։ Օտար դեսպանները իրերի դրութեան մասին տեղեկութիւններ ստանալու համար դիմում են ռուսական հիւպատոսարանին, որից տեղեկացաւ Ռաշտի դէպքերի մանրամասնութիւնը նաև պարսից կառավարութիւնը։ («Н. В.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՀԱՄԱԿՐԵԼԻ ՅԻՍՆԱՄԵԱԿ

«Տարազ» պատկերազարդ հանդէսը իր վերջին համարում (№ 2), յայտնելով որ մտադիր է այսուհետև տալ XIX դարի երկրորդ կիսամեակից մինչև այժմս էլ դեռ հասարակական ասպարէզներում կանգուն հայ վետերանների կենսագրութիւնները և նախամեծարութիւն է տալիս նախ նրանց, որոնց գործունէութեան յիսնամեակը լրանում է ներկայ 1909 թ.,—առաջ է բերում բժշկապետ Յովհաննէս Գասպարեանցի կենսագրութիւնը, նրա յիսնամեայ բժշկական գործունէութեան առիթով (1859—1909 թ.)։

Մեծ համակրութեամբ և յարգանքի անկեղծ զգացմունքով ողջունելով յիսնամեակը օգտակար և արդիւնաբեր գիտական-բժշկական գործունէութեան բժշկապետ Յովհաննէս Գասպարեանցի, որ լրանում է այս տարի, մենք պէտք է կցենք, որ բժշկապետ Յովհաննէս Գասպարեանցը մէկն է այն հազուագիւտ հայ բժիշկներից, որոնք հաւատարմօրէն, անընդհատ և անյողդողդ ծառայել են գիտութեանը և փրկութիւնը որոնել են զուտ, անխարդախ գիտութեան մէջ, որոնք գիտութեան շահերը գեր ի վերոյ են դասել ամեն ուրիշ շահերից, որոնք շարունակ հետևել են գիտութեանը, նրա վերջին խօսքին և որոնցով հայ ժողովուրդը կարող է պարծենալ, թէ նա ևս եւրօպական մտքով գիտնական բժիշկներ ունի։

Բժշկապետ Յ. Գասպարեանցը երիտասարդական այն օրից, երբ նա հանդէս է եկել իբրև բժիշկ, մի րոպէ, մի վայրկեան աչքաթող չէ արել գիտութիւնը և այսօր իսկ, 70 տարեկան ծերունի, նա ստանում, կարդում և ուսումնասիրում է բժշկական և յարակից գիտութիւնների վերաբերեալ բոլոր նոր և լուրջ աշխատութիւնները, հանդէսները և այլ գրուածները։ Դա ցոյց է տալիս անշէջ, անսպառելի սէր և ձգտումն դէպի գիտութիւնը, որի յաղթանակով միայն կը կատարվի և ամեն մի ժողովրդի, ամբողջ մարդկութեան կատարելագործութիւնը և յաղթանակը։

Եւ նրան մոտ կանգնած անձինք, նրա կեանքին մոտ կանգնած բարեկամները գիտեն նաև, որ նա արթուն կերպով հսկել է և հսկում է հայ կեանքի բոլոր երևոյթներին, հայ գրականութեան, բանաստեղծութեան, մամուլին, հայ իրականութեան հրատապ խնդիրներին։ Շատ քիչ անձինք այնքան հմտութիւն ունեն հայ գործիչների մասին, որքան բժշկապետ Յ. Գասպարեանցը։ Վիճեցէք հետը Ս. Նազարեանի, Նալբանդեանի, Գամառ-Քաթիպայի, Րաֆֆու, Գ. Արծրունու, Սեդրակեանի, Մակար կաթողիկոսի և ազգային այլ գործիչների մասին, խօսեցէք «Հիւսիսափայլի», «Կռունկի», «Մեղու Հայաստանիի», «Մշակի», «Նոր-Դարի», «Արձագանքի» մասին և դուք կը զարմանաք, թէ որքան նուրբ, մանրամասն նա ուսումնասիրել է հայ կեանքի երևոյթները և հոսանքները ու որքան մօտ կերպով ծանօթ է հայ պատմութեան։ Վայը եկել տարել է այն հայ գործչին, լինի նա թէկուզ հանճար, որի մէջ նա նկատել է կեղծիք, անշիտակութիւն. այդպիսիների վերաբերմամբ նա այնքան դաժան և խիստ է դառնում, որ այլևս արդարացուցիչ որևէ պարագայ, կամ մեղմացուցիչ որևէ հանգամանք չէ գտնում։

Եւ այդ շիտակ, ուղղամիտ 70-ամեայ ծերունին դեռ տոկունութեամբ գործում է, դեռ հետևում է գիտութեան, հաւատալով իր կոչման և միսսիային։ Ամբողջ յիսուն տարի նա գործում է ասպարէզի վրա, գիտութեան համար։

Մեր կարծիքով, ահա մի լաւ և եզակի առիթ հայ հասարակութեան համար, ցոյց տալու, որ նա գիտէ տօնել և յոբելեաններ իսկական մտքով, այն է կազմակերպել յոբելեան ոչ թէ փող մուրալու այս և այն կուսակցական գրողի, գործչի համար, այլ կազմակերպել յոբելեան՝ այս բառի իսկական մտքով—մատուցանել պատիւ, յարգանք արժանաւոր գործչին, սարքել մի հանդէս, որտեղից մամոնան արտաքսված կը լինի, ուր մարդիկ կը գան միայն յարգանքի, բարոյական գնահատութեան համար, վերջապէս՝ կատարել իսկական յոբելեան։

Առաւելապէս «Մշակին» հաճելի է ծանրանալ բժշկապետ Յ. Գասպարեանցի յիսնամեայ գործունէութեան վրա, որովհետև նա, հանդիսանալով «Մշակի» և նրա հիմնադիր Գր. Արծրունու անկեղծ բարեկամ և համակրող, իր անխարդախ, շիտակ և անհաշտ համակրութիւնը պահպանել է մինչև այսօր և յաճախ խրախուսել, ոգևորել մեզ, այդ գործը շարունակողներիս իր բարոյական աջակցութեամբ և ոգևորիչ յորդորներով։

Հ. Ա.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Բագու, 16 փետրվարի

Հայոց Մարդ. Ընկ. մեծ ուսումն. դահլիճում երէկ երեկոյեան տեղի ունեցաւ երեկոյթ յօգուտ Մադրասայի գիւղատնտեսական փոխադարձ ընկերութեան։

Նախքան երեկոյթ-ներկայացման մասին խօսելս, պիտի ասեմ, որ ոչ միայն Շամախու գաւ. շրջանում Մադրասա գիւղի գիւղատն. փոխ. ընկ. նման հաստատութիւն չը կայ, այլ այդպիսին չը կայ և Բագուի նահանգի շրջանում։ Երրորդ տարին է, ինչ այդ ընկ. գոյութիւն ունի և հաստատված է պատշաճաւոր իշխանութիւնից։

Ներկայացրին «Եաղ-Աստ» վոդ. 2 գործ., հեղ. Ղազարեանի։ Խաղը ընդհանրապէս լաւ անցաւ։

Թէև ծրագրի մէջ երկրորդ մասը դրված էր «Արևելեան երաժշտութիւն», բայց չը գիտենք ինչու փոխեցին և անցան երրորդին՝ «Զաւեշտին»։ Պր. Պետրոսեան խօսեց «Կինը», պ. Քարամեան «Գիւղացու ցաւը» երգեց, իսկ պ. Վերդեան թառի վրա նուագեց պարսկական սգերգ յայտնի «Բայաթի Ղաջարը», որը հանդիսականները կրկնել տուին։

Երեկոյթը վերջացաւ եւրօպական և ասիական պարերով, որ նուագում էին սազանդարները և երաժշտական խմբերը և որի ուրախ տպաւորութեան տակ ցրվեցին հանդիսականները։

Շնորհակալութեան արժանի է Մարդ. Ընկ. ներկայ վարչ., որը ոչ մի ջանք չէ խնայել այդ հսկայ դահլիճը յարմարեցնելու ներկայացումների համար։ Բեմը պատրաստ իր յարմար զարդերով, վճարը էժան՝ գիշերը արժէ 100 ռուբ., մինչդեռ եթէ Մադրասցիք մի այլ տեղ իրանց երեկոյթը տային (Թաղիեվի թատրոնում կամ Նիկ. ցիրկում), 300—400 ռուբ. պիտի վճարէին։ Եւ դրա յարմարութիւնը այնքան լաւ է, որ օտարներն անգամ արդէն սկսել են ներկայացումները և երեկոյթները այդ դահլիճում տալ։ Ամսիս 20-ին «Հրէական երեկոյթ» է, ուր կը լինի հրէական հասարակութիւն, իսկ 21-ին, շաբաթ օրը, Զանգեզ. գաւ. Լոր գիւղի ուսումնարանի օգտին։

Շատ պարզ է, որ Մարդ. Ընկ. այդ շէնքը կառուցել է ուսումնարանի համար և ինքը, այդ ընկ., շատ ուսումնարանների է նպաստ տուել Շամախու թեմում։ Արդեօք նրա համար միևնոյն չէ, որ երեկոյթներ են տալիս Շամախու, Շուշու կամ Զանգեզուրի գաւառի գիւղական ուսումնարանների օգտին. եթէ այդպէս է, լաւ կը լինէր, որ այդ ընկերութիւնը հայ ուսումնարանների օգտին տրվելիք երեկոյթների համար փոխանակ 100 ռ. վերցնելու իբրև վարձ, վերցնէր այնքան, որքան լուսաւորութեան և այլ ծախսերն են։ Դրանով աւելի մեծ գործ կը կատարէր, քան 100 ռ. վերցնելով ու Բագուի հարուստ ծխականների վրա ծախսելով։

Գարագաշ

Կրասնօվօդսկ, 16 փետրվարի

Փետրվարի 15-ի գիշերը, քաղաքից դուրս, Բալ-Բուլաղ ձորակի տակ անյայտ չարագործներ ինչ որ սուր երկաթով 5 հարուած տալով գլխին՝ սպանել են 1-ին անդրկասպեան-երկաթուղային գնդի առաջին վաշտի զինւոր Պլոտնիկովին։

Ինչպէս պատմում են, Պլոտնիկովը կալանաւորված է եղել նոյն վաշտի զօրանոցին կից զինւորական կարցերում և սպանութեան գիշերը փախուստ է տուել կալանաւորութեան տեղից պոկելով դռան կապանքները։ Մանրամասնութիւնները պարզված չեն։

Զ.-էն

Մերվ, 7 փետրվարի

Ամսիս 5-ին ս. Վարդանանց նահատակութեան տօնի առիթով հանդէս տեղի ունեցաւ տեղիս ծխական ուսումնարանի մէջ։ Հանդէսը սովորականի նման երգերով և ոտանաւորներով՝ փոքր ինչ բաւարարութիւն տուեց հասարակութեան։ Մի պակասութիւն, որ զգալի էր հասարակութեան համար, այդ այն էր, որ ուսուցչութեան կողմից ոչ ոք տօնի նշանակութեան մասին մի բառ չարտասանեց։

Նոյն օրը երեկոյեան տեղիս սիրողների խումբը, հասարակական ժողովարանի դահլիճում յօգուտ ծխական ուսումնարանի, տուեց Լ. Մանուէլեանի «Դօքտօր Բուրանդ Բօշյեան» և Ա. Արեշատեանի «Օրթաճալի քէֆը»։

Դահլիճը կիսով չափ լիքն էր։ Զուտ արդիւնք մնաց մոտ 80 րուբլի։ Հասարակութիւնը գոհ սրտով և ուրախ տրամադրութեան տակ հեռացաւ դահլիճից։ Mentor

Էջմիածին, 15 փետրվարի

Կովկասեան Հ. Բարեգործական Ընկերութեան տեղական ճիւղի ձեռներէցութեամբ կազմակերպվել են ժողովրդական դասախօսութիւններ գիւղատնտեսութեան զանազան ճիւղերից, մանաւանդ վազի մշակութեան ու գինեգործութեան մասին. այդ դասախօսութիւնները անելու է գիւղատնտես Կ. Մելիք-Շահնազարեանը։ Այսօր առաջին դասախօսութիւնն էր, որին ներկայ էր գիւղի հասարակութիւնից մեծ բազմութիւն, որ շատ գոհ մնաց և հետաքրքրութեամբ սպասում է հետևեալ դասախօսութիւններին, որոնք կանոնաւորաբար պիտի տեղի ունենան այսուհետև։

Կովկասի Հայ Տնայնագործական Ընկերութեան նախաձեռնութեամբ և նախնական ծախքերով այստեղ վերաբացվեց այս շաբաթ նախկին ջուլհականոց-արհեստանոցը, որը ծառայելու է շրջակայ գիւղերում տնայնագործութեան զարգացմանը։ Այս ջուլհականոցի գործունէութեան ղեկավարութիւնը վերցրեց իր վրա Կ. Հ. Բարեգործական Ընկերութեան տեղիս ճիւղը։ Ջուլհականոցի վարպետն է Համամլուի տնայնագործական դասընթացների աւարտողներից մէկը՝ Ա. Մակարեան։ Առ այժմս կան մոտ 20 աշակերտ։

Աւելորդ չենք համարում շեշտելու այստեղ, որ Կովկասեան Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղը շնորհիւ իր եռանդոտ վարչութեան, որի նախագահն է Մ. Բերբերեանը, եռանդուն ու բեղմնաւոր գործունէութիւն է արծարծում և ծրագրել է մի շարք գեղեցիկ կուլտուրական ձեռնարկութիւններ։ ***

Գրիգորիօպօլ, 9 փետրվարի

Ամսիս 5-ին պատարագից յետոյ տեղիս ծխական դպրոցի դահլիճում կայացաւ սովորական աշակերտական առաւօտը. փոքրիկ երեխաները, աղայ թէ աղջիկ, հայերէն պարզ արտասանութեամբ ասացին 14 ոտանաւորներ. մէջ ընդ մէջ երգում էր տեղիս սիրողների եկեղեցական քառաձայն խումբը ազգային երգեր։ Հաւաքված հասարակութիւնը գոհ սրտով հեռացաւ դպրոցից։

Նոյն օրը երեկոյեան տեղիս եկեղեցական հոգաբարձութիւնը նոյն դպրոցի շէնքում տուեց իր երեկոյթը, որ ահա երեք տարուց ի վեր հետզհետէ սովորական է դառնում հայ և այլազգի հասարակութեան համար։ Թէ հայ, թէ ռուս և թէ հրէայ հասարակութիւնը սիրով մասնակցեց այս երեկոյթին, որով թէ ինքը ստացաւ մեծ բաւականութիւն և թէ նիւթապէս նպաստեց հոգաբարձութեանը։

Առանձին շնորհակալութեան արժանի է հոգաբարձութեան գործավար պ. Ս. Յ. Բեննին, որ ներկայացման բոլոր հոգսերը իր վրա առաւ և սիրողների հետ աջողութեամբ գլուխ հանեց։ Ապա՝ տիկնայք Մ. Քասապեանց, Ե. Քասապեանց, Վ. Խորոշանեանց, օրիորդներ՝ Ե. Բոյաճեանց, Շ. Քասապեանց, Ն. Սամուէլեանց, Ս. Խորոշանեանց, Մ. Դեմիրթաշեանց և Ն. Դեմիրթաշեանց, որոնք կազմեցին բուֆեթը և նրա բաժանմունքները պատերի դահլիճում, նուիրաբերելով ուտելիքների և խմիչքների մեծ մասը։ Վերջապէս՝ հոգաբարձութեան անդամներ պ. պ. Յ. Ս. Դեմիրթաշեանց և Մկ. Յ. Խորոշանեանց, որոնք չը խնայեցին իրանց ժամանակն ու եռանդը երեկոյթին ըստ կարելոյն շքեղութիւն տալու համար։ Երեկոյթի ելևմուտքի հաշիւը դեռ պատրաստ չէ, բայց զուտ արդիւնք համարվում է 300 ռ. աւելի, չը հաշւելով ուրիշ քաղաքներից ուղարկված նուիրաբերութիւնները, որոնց գումարը դեռ այժմ 100 ռ. անց է։ Զուտ արդիւնքը նշանակված է հոգաբարձութեան միջոցների ուժեղացմանը։

Յովհաննէս ք. Զուրաբեան

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

6 փետրվարի

«Մշակի» № 21-ում կարդացի այն պատգամաւորութեան մասին, որ դիմել է Կովկասեան ուսում. շրջանի հոգաբարձութեանը Ագուլիսում պրոգիմնազիա բանալու համար։ Ես ինքս լինելով Վերին-Ագուլիսից, լաւ ծանօթ լինելով ինչպէս բուն Ագուլիսի, նմանապէս և շրջակայ հայ գիւղերի կարիքին՝ չեմ կարող լռել և չառաջարկել այն, ինչ որ իմ խոր համոզմամբ շատ շատերի համար ևս պարզ պէտք է լինի։

Ինչպէս յայտնի է, մեր գաւառներում, մանաւանդ գիւղերում օրէց-օր աւելանում են գործազուրկները և սակաւահողութեան ու այլ պատճառներից ստիպված նրանք գաղթում են դէպի քաղաք։

Գիւղում պրոգիմնազիա բանալով մենք ոչնչով չենք օգնում տնտեսապէս յետ մնացած գիւղացիներին. գուցէ դրանով աւելացնենք ինտելիգենտ գործազուրկների թիւը. ուրեմն մի չարիքը փոխարինում ենք միւսով։

Մեր համեստ կարծիքով, Ագուլիսի նման կենտրոնում աւելի յարմար կը լինէր գիւղատնտեսական մի դպրոց հիմնել իր գլխաւոր և տեղական պայմաններին յարմար բաժանմունքներով։

Այդպիսով Ագուլիսը մի կենտրոն կը դառնար շրջակայ հայ գիւղերի տնտեսական դրութիւնը բարձրացնելու համար։

Գիւղական դպրոցներն աւարտող մանուկներն, այնտեղ սովորելուց յետոյ, կարող էին ամենաօգտակար մարդիկը դառնալ իրանց գիւղերում և ապագայում զեմստվօյի համար։

Պրոգիմնազիան կարող է նպատակայարմար լինել այն ունևոր ծնողների համար, որոնք իրանց զաւակներին առանց այն էլ կարող են ուրիշ քաղաքներում կրթութիւն տալ և յետոյ համալսարան ուղարկել։ Պրոգիմնազիան աղքատ դասակարգի կարիքներին այնքան էլ չէ համապատասխանում։

Երկար տարիների ընթացքում մենք միշտ արել ենք այդ սխալը. չը նայած այն բոլոր յորդորներին ու մամուլի խօսքին, մենք միշտ հեռու ենք փախել իրականութիւնից, մեր դպրոցները չենք յարմարեցրել գործնական կեանքի պահանջներին։

Այժմ ժամանակ է, որ մենք ըմբռնենք մեր անցեալ սխալը և օգտվենք նրանից։

Թող Ագուլիսը լաւ ըմբռնելով հայ ժողովրդի կեանքի իրականութիւնը՝ ձեռներէց գտնվի և իր կենդանի օրինակով առաջնորդ լինի միւս գաւառական կենտրոնների համար։

Յակոբ Մելիք-Մուսայեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի նահանգական դատարանը, որին ներկայացված է հանգուցեալ Եգոր Զոհրաբեանի կտակը, թէև հաստատել է այդ կտակը, բայց որոշել է պահանջել կտակակատարներից մոտ 8000 րուբլի ժառանգական տուրք այն գումարի համար, որ կտակված է Թաւրիզում դպրոց հիմնելու գործին։ Օրէնքով, բարեգործական նպատակով կտակված գումարներից տուրք չէ վերցվում, բայց նահանգական դատարանը գտել է, որ երբ գումարը կտակվում է մի օտար պետութեան մէջ գործադրվելու, այդ դէպքում տուրք պէտք է պահանջվի։ Կտակակատարները որոշել են բողոքել դատարանի այդ վճռի դէմ։

◆ Կովկասի Փոխարքան, համաձայն նահանգապետի առաջարկութեան, հեռագրով միջնորդութիւն է յարուցել ճանապարհների հաղորդակցութեան մինիստրի առաջ, որ Թիֆլիսում IX հերթական Ջրանցքային համագումարին մասնակցող պատգամաւորները օգտվեն էժանացրած տոմսակներով թէ Թիֆլիս գալու և թէ իրանց տեղերը մեկնելու համար։

◆ Թիֆլիսի դպրոցական մասնաժողովի որոշման համաձայն, կազմակերպվում է յատուկ մասնախումբ քաղաքային արհեստաւորաց դպրոցի վերատեսչից և քաղաքային տարրական դպրոցների կառավարիչներից Գոգոլի յիշատակի տօնակատարութիւնը մշակելու համար։ Ընդսմին դումայից խնդրվում է 1000 րուբլի յատկացնել Գոգոլի գրուածքների լիակատար ժողովածուն ձեռք բերելու և աշակերտներին բաժանելու համար։

◆ Յայտնի փիլիսոփայ Դարվինի ծնընդեան 100-ամեակը լրանալու առիթով, ուսուցիչ Յովհաննիսեանը փետրվարի 22-ին մտադիր է մի դասախօսութիւն կարդալ «Չ. Դարվինը և նրա վարդապետութիւնը» թեմայով։

◆ Շաբաթ օրը տեղի կունենայ խորհրդակցութիւն քաղաքային վարչութեան ծառայողների կազմը վերամշակելու հարցի քննութեան համար։

◆ Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան խորհուրդը խնդրում է մեզ տպել հետևեալը. «Մշակի» № 29-ում տպված է Կ. Հ. Բ. Ը. խորհրդի նամակը, որի մէջ խորհուրդը տեղեկութիւն է տալիս, թէ որքան գումար է ժողովված Թիւրքահայ գաղթականների օգտին տ. տ. Կիւլպէնկեանի, Դ. Յովհաննիսեանի և Քալանթարեանի միջոցով. յիշեալ յարգելի տիկինների թւում չէ յիշված տ. Եկատերինա Խալաթեանը, որը նոյնպէս մեծ ջանք և եռանդ է գործ դրել ժողովարարութեան գործում։ Ուստի խորհուրդը լրացնելով այդ թերութիւնը յայտնում է իր շնորհակալութիւնը յարգելի տիկին Եկատերինա Խալաթեանին։ Նոյնպէս «Փորձի» № 26-ում յիշված՝ Ղուբայի ճիւղից ստացված 5 ռ. ոչ թէ Ղուբայի ճիւղի վարչութիւնից է, այլ վարչութեան նախագահ՝ բժ. Միքայէլ Մ. Մկրտչեանից»։

◆ Ջրի և էժանագին ճաշարանների ընկերութիւնը ստացել է հոգեհանգստեան ճաշերի համար տ. Եղիսաբէթ Միրզոյեանից 60 րուբլի և պ. Գրիգոր Եարալեանից 50 ր., որի համար ընկերութեան վարչութիւնը իր խորին շնորհակալութիւնն է յայտնում։

◆ Փետրվարի 17-ին, Արամ Սաֆարեանի սպանութեան առիթով, ոստիկանութիւնը ձերբակալել է Բօրչալուի գաւ. բնակիչներ Արշաւիր և Բաղդաշ Հովհաննեաններին և խանութպան Կիտանովին։

◆ Փետրվարի 18-ին Գօգօլեվսկայա փողոցում ձերբակալվեց Թիֆլիսի գեներալ-նահանգապետութեան սահմաններից աքսորված Վասիլիյ Զուբիևը։

◆ Փետրվարի 18-ին Կովկասի Փոխարքայի պալատի ծխնելոյզներից մէկը բռնկվեց։ Կրակը հանգցրեց հրդեհաշէջների խումբը։

◆ Երկարատև բանակցութիւններից յետոյ, Թիֆլիսի էլեքտրաքարշի ծառայողները համաձայնել են ներկայացուցիչներ ընտրել ընկերութեան ներկայացուցիչ ինժեներ Լէբոնի հետ բանակցելու համար։

◆ Կարսի և Բաթումի շրջանի կողմից ընտրված՝ Պետական Դումայի անդամ Շերվաշիձէն հեռագրով տեղեկացնում է, որ Կարսում քաղաքային ինքնավարութիւն մտցնելու հարցը Դումայում կը քննվի այս նստաշրջանի վերջում։

◆ Փետրվարի 18-ին, Թիֆլիսում, Պեսկօվսկայա փողոցում, № 78 տանը բժ. Գրիգորեանը բացեց մասնաւոր հիւանդանոց։ Բացմանը ներկայ էին այդ թաղի բնակիչները, մահմեդական «Մօլլա Նասրէդդին» թերթի խմբագիրը և մամուլի ներկայացուցիչները։ Մաղթանքներ կատաբեցին ուղղափառ, հայ և մահմեդական հոգևորականութիւնները։ Ցանկանում ենք լիակատար աջողութիւն նոր հիւանդանոցին, որ կոչված է ծառայելու առաւելապէս չքաւոր դասին։

◆ Մեզ խնդրում են տպել, որ Կատ. Աթայեան շատ չքաւոր դրութեան մէջ է։ Շուշանիկ դուստրը պառկած է անկողնում. ոչ մի աշխատող ձեռք չը կայ։ Խեղճութեան մասին ունի քահանայի վկայական։ Կ. Հ. Բ. Ընկերութիւնը մերժել է օգնել նրան. տիկինը դիմում է բարերար մարդկանց օգնութեանը։ Հասցէն՝ Сурпъ Минасская ул., дом. М. Оганезова, № 30.

◆ Թիֆլիսի քաղաքային Ջրանցքից անցեալ տարի զուտ արդիւնք ստացվել է 350,437 ր. 80 կ.։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութեան զինուորական ատեանում կախել են այն երիտասարդների ցուցակը, որոնք այս տարի կոչվելու են զինուորական ծառայութեան։ Նրանք, որոնք որևէ արտօնութիւն ունեն ընտանեկան դրութեան տեսակէտից, պարտաւոր են այդ մասին յայտնել գրաւոր կերպով զինուորական ատեանին ոչ ուշ, քան մինչև մարտի 1-ը։

ՄԱՄՈՒԼ

Դժգոհութիւն օսմ. պարլամենտի հայ երեսփոխանների դէմ

Թիւրքիայի հայութիւնը և հասարակաց կարծիքը սկսել է արդէն աննպաստ կարծիք կազմել հայ երեսփոխանների և նոյնիսկ օսմանեան պարլամենտի մասին։ Իբրև կարծիքների օրինակ կարող է ծառայել «Ժամանակի» մէջ տպված հետևեալ նամակը Հալէպից.

Հալէպի օսմանեան երեսփոխաններուն մասին, եօթը առաջնորդարաններէ վաւերացուած գանգատագրին յիշատակութիւնն իսկ չկարդացինք թերթերուն մէջ։ Առաջին պատեհութեան ժողովուրդի ձայնը «դեօշէկ ալթը» կըլլայ։ Ասանկ խորհրդարանի մը ապագան գուշակել դժուարին չէ կարծեմ։ Մենք կը վախնանք թէ հին օրերը, զորս այնքան արհաւիրքով կը վերյիշենք, ի վերջոյ պիտի փնտռենք։

Չենք կրնար ամենևին սպասել արդարութիւն մեր մեծ հզատէր Նէֆի փաշայէն, որ թէև հայը չէ կոտորած, սակայն մեզի համար նոյնքան նուիրական հազարաւոր իսլամ գիւղացի եղբայրներ ամենաբարբարոս վաշխառութեամբ հարստահարած է։ Դարձեալ հաւասարութեան պաշտպան չենք կրնար կարծել Մրրի [illegible] կերդուրնցնէ քրիստոնեաներու քով չկայ։ Մինչև մեր խորհրդարանը չմաքրուի այսպիսի հակադիր տարրերէ, բնիոն մը արդարութիւն չենք կրնար յուսալ անկէ։

Միթէ նուազ դատապարտելի է, բացի Գ. Զօհրապէ, միւս հայ երեսփոխաններու զաքարիական պապանձումը։ Ինչ ընել գնացին խորհրդարան, աթոռ յարդարել։ Թերևս հայու պիրկ ջղերը թուլացան խորհրդարանի մեղկ մթնոլորտի և թիւրքական գոզարիկ պոլիտիկի տակ։ Տեարք, մեր վարչ. աթոռները չեն ձեր գրաւածները, ազգին ձայներուն շնորհիւ շահեցաք ձեր դիրքը զոր հիմա չարաչար գործածելու հարկ չկայ։ Պատասխանատու էք անոր։

*

Հայ սահմանադրական մարմնի առաջարկը

Երևի վերոյիշեալ հայ երեսփոխանների թերութիւնը մի կերպ դարմանելու հոգսով, Կ. Պոլսում կազմված «օսմանեան սահմանադրական հայ մարմին» հետևեալ առաջարկն է ներկայացվել հայոց ազգային ժողովի մի երեսփոխանի՝ Ա. Գասպարեանի կողմից։

«Օսմ. սահմանադրական հայ մարմինը» որոշած էր գոնէ չորս տարուան համար իր գոյութիւնը պահել և այս միջոցին հակակշռել իր ընտրած հայ երեսփոխաններուն գործառնութիւնը օսմ. խորհրդարանին մէջ. նկատելով որ յիշեալ մարմինը առ այդ գործնական դեր մը կատարելու համար վերջնական կազմակերպութիւն մը ստացած չէ տակաւին, նկատելով որ օսմ. խորհրդարանի հայ անդամները ներկայացած առիթներէն օգտուելով հայոց իրաւունքները պաշտպանելու պարտականութեան մէջ հարկ եղած կորովամտութիւնը ցոյց չեն տուած մինչև ցարդ, որուն համար զիրենք հարցաքննելու պէտքը անհրաժեշտ դարձած է յատենի ժողովոյ, նկատելով որ 10 հայ երեսփոխաններու միջև նոյն իսկ հարկ եղած համերաշխութիւնը գոյութիւն չունի ի յաջողութիւն սոյն պարտականութեան կատարման, նկատելով որ յիշեալ 10 երեսփոխաններէն միմիայն 4-ը վերահասու են պատկա. մարմնոյդ քաղաքական ծրագրին, իսկ միւս 6-ը, որոնք են՝ տեարք Գարեգին Պաստրմաճեան՝ Կարինէն, Գեղամ Տ.-Կարապետեան՝ Մուշէն, Յակոբ Պապիկեան՝ Ռոդոսթոյէն, Ստեփան Սպարթալը՝ Իզմիրէն, Վահան Քաֆաճեան՝ Վանէն, Վարդգէս Սէրէնկիւլեան՝ Կարինէն, յիշեալ ծրագրին բովանդակութենէն տեղեակ չեն, մինչդեռ անոր հետևելու համար իրենց յանձնառութիւնը ձեռք բերել յատենի մարմնոյդ, նկատելով որ գործելու ընթացքին մէջ, ի հարկին դիտողութիւններ ընել կարենալու համար գիտակցաբար, և մանաւանդ անոր իսկութիւնը վերոյիշեալ երեսփոխաններուն ծանօթացնելու նպատակաւ, հարկը կը պահանջէ որ սոյն ծրագիրէն մէյ-մէկ օրինակ տրուի բոլոր երեսփոխաններուն, ուստի կառաջարկեմ՝ ա) սոյն ծրագիրը առանձինն տպագրութեան յանձնել, իսկ եթէ միջոցները թոյլատու չեն, գոնէ 100 օրինակ պատրաստել տալ պօլիգրաֆով. բ) մօտաւոր օր մը ի նիստ հրաւիրել թէ օսմ. սահմանադրական հայ մարմնոյ անդամները և թէ վերոյիշեալ օսմ. երեսփոխանները։

Մեր կարծիքով, Թիւրքիայում ևս նոյն աղէտալի սխալը գործվեց, ինչ որ մեզ մօտ Ռուսաստանում Պետական Դումայի ընտրութիւնների ժամանակ. մարդիկ չը կարողացան կանգնած մնալ կոչման բարձրութեան վրա, այլ մասնաւոր, կուսակցական և թայֆայական շահերը բարձր դասեցին հայ ժողովրդի ընդհանուր շահերից։ Նրանք ձգտեցին, որ Պետական Դումա գնան իրանց ներկայացուցիչները։ Այդ ձգտումը դատապարտելի չէր, որովհետև ամեն մի քաղաքական կուսակցութիւն, բնական է, պէտք է աշխատէ, որ իր կուսակիցներին ընտրել տայ, բայց ժողովրդասէր և գաղափարական կուսակցութիւնը այն դէպքում, երբ տեսնում է, որ իր մէջ չը կան կարող և օրինաւոր մարդիկ, չը պէտք է արգելք լինի, որ ընտրվեն ուրիշ դեմօկրատիական բանակներից կարող անձինք։ Եւ դրա հետևանքը լինում է այն, որ ռուսաց Պետական Դումայի անդամ են ընտրվում այնպիսի մարդիկ, որ մենք ստիպված ենք լինում կարմրել։ Եւ վերջիվերջոյ տուժողը լինում է հայ ժողովուրդը։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 19 փետրվարի

1903 թւին ես, Յարութիւն Շամիլեանս, կեանքս ապահովագրեցի 5000 րուբլով. 1906 թ. յունիսին այդ դրամը նոտարով կտակեցի իմ հայրենի՝ Թիւրքիայի Դարանդա գիւղին (Սեբաստիայի գաւառ)։ 1906 թ. նոյեմբերին իմ տունը (20,000 ր. արժողութեամբ) նոտարական կարգով թողեցի Երևանի որբանոցին օգտին։ 1907 թւի մարտի 1-ին իմ ունեցած 2-րդ խաղարկու տոմսով տարայ 75,000 րուբլի, որից 19,000 ր. բաժին հանեցի Կովկասի հայ-թիւրքական ընդհարումներից վնասված արկածեալներին և Թիւրքահայ սովեալներին։ Բացի դրանից այդ փողից իմ հարազատ ազգականներին նուիրեցի 27,500 ր., որից 6000 ր. ստացաւ իմ փեսան։

Յետոյ, այդ գումարից 14,000 ր. կանխիկ տուեցի Երևանի որբանոցի օգտին, քանդելով իմ որոշումը, որով 20,000 ր. արժեցող տունը սկզբում կտակել էի այդ որբանոցին։ 500 ր. անմիջապէս բաժանեցի աղքատներին։ 3500 ր. բանկը դրի Սուրէն որդուս անունով, 1500 ր. Արդաֆան որդուս անունով, 1500 ր. Արփենիկ աղջկաս անունով, 1500 ր. կնոջս՝ Եղիսաբէթի անունով և 2000 ր. «Մշակի» խմբագրութեան միջոցով 20 օրինակ «Մշակ» որից 5-ը Պարսկաստանի, 15-ը Թիւրքիայի հայ գիւղերի համար։

4000 ր. ծախսվեց 75,000 ր. բանկից ստանալու ժամանակ։

Այժմ գնել եմ 3 հատ III կարգի խաղարկու տոմսեր, նուիրելով նախօրօք իմ հայրենիքի ուսումնարանին, նոտարական կարգով։

Այս տեղեկութիւնները հարկաւոր համարեցի հաղորդել հայ հասարակութեան մի քանի նկատումներից դրդված։

Յ. Շամիլեան

—

Խարբին, 17 յունվարի

Հեռու-Արևելքի Խարբին քաղաքի հայ գաղութը չէր կարող անտարբեր մնալ դէպի իր սովեալ քոյրերը՝ զէյթունցիները և ազգիս ընտրեալի կոչը։ Ծրագալոյցի գիշերը հաւաքեցինք 137 րուբլի, որից հանված կարևոր ծախսերը՝ 4 րուբլի, մնացած 133 րուբլին փոխադրվում է ձեր հասցէով յանձնելու ըստ պատկանելոյն։

Մելքոն Գրձելեան

Նուիրատուներն են «Գ. Ս. Զազունեան և ընկ.» 25 ր., Ասլեանեան, Ուլուխանեան, Թէյմուրազեան, Աբրահամեան, Ռուբէնեան, Քիշլալի Մ., Աւետիքեան, եղբ. Յակոբեաններ, Գրձելեան և Տէր-Յովսէփեան Գր. 5-ական րուբլի, Պետրոսեան 4 րուբլի, Լալաբէգեան, Марія Вавули, Կուլոյեան Գ., Յարութիւնեան Լ., Իշխանեան Ս., Գրձելեան, Քաչուբեան, Տէր-Առաքելեան, Ադուժեան Ա., Սարգսեան Մ. և Ղարախեան 3-ական րուբլի, Տէր Սարգսեան, Բաղդասարեան Ա., Սահակեան Ս. Կիրլեան 2-ական րուբլի, Զուբարեան, Բէգիջանեան Կ., Աւետիքեան Զ., Օնանեան, Շահնազարեան Գ., Փաշայեան, Տէր-Յակոբեան, Տիժոյեան, Իշխանեան, Շահնազարեան, Սարգսեան Զ., Տէր-Յովակիմեան ինժեներ և Շամիրեան 1-ական, Գրիգորեան և Զոլագեան Գ. 50-ական կոպէկ, ընդամենը 137 րուբլի։

—

Թիֆլիս, 18 փետրվարի

Մուրացանի երկերի տպագրութեան համար ընտրված յանձնաժողովը արդէն ստացած լինելով այդ մասին հանգուցեալի ժառանգների համաձայնութիւնը, ներկայումս խմբագրում է իր տրամադրութեան տակ եղած նրա բոլոր տպագիր և անտիպ աշխատութիւնները և շուտով կը յանձնի տպագրութեան։ Յանձնաժողովը սրանով խնդրում է այն անձերին, որոնց մօտ գտնվում են Մուրացանի ձեռագիր աշխատութիւններից, այդպիսիներն ուղարկել իրան մինչև առաջիկայ մարտի վերջը հետևեալ հասցէով՝ Тифлисъ, Бебутовская ул., № 30, Исааку Арутюнянъ.

Յանձնաժողով

—

Մերվ, 8 փետրվարի

Երկու տարուց ի վեր տեղիս կանանց կարմիր խաչի վարչութեան տրամադրութեան տակ գտնված երկու հարիւր ինն րուբլի (209 ր.) գումարը իր ժամանակին չը գործադրվելով նպատակին, վարչութիւնը յունվարի 30-ին իր վերջին ժողովում որոշեց ուղարկել այն թիւրքահայ սովեալներին, գտնելով այդ աւելի նպատակայարմար։

Փոխադրելով խմբագրութեանդ այդ գումարը՝ 208 րուբլին՝ դուրս եկած փոխադրութեան և պօստի ծախս 1 ր. խնդրում եմ յանձնել սովեալներին օգնող յանձնաժողովին։

Ի դիմաց վարչութեան գանձապահուհի՝
Աննա Ղուկասեան

ՄԵՐ ՁԱՅՆԸ*)

Միջնադարեան հալածանքի ու բռնութեան սև ուրուականը սաւառնում է հայոց եկեղեցու գլխին։ Լրագիրներից տեղեկացանք, որ «Արարատի» համարից պոկվել և հրոյ ճարակ է դարձել Երուանդ վարդապետի՝ «Հայոց եկեղեցու վերանորոգութեան խնդիրը» խորագրով յօդուածը։

Փշոտ ճանապարհ են ընտրել իրանց համար Երուանդ վարդապետը և նրա հետ միասին մի քանի ուխտեալ միաբաններ, որոնք արդի աշխարհահայեցողութեան ներկայացուցիչ լինելով և մայրենի եկեղեցու շահն ու ապագան իրանց սրտին շատ մօտիկ ընդունելով՝ համարձակութիւն են ունեցել ընդդէմ խթանի աքացել։

Թէ ինչ անկեալ վիճակի է հասել այժմս ընդհանուր եկեղեցին, թէ ճգնաժամի որպիսի դառն երկունքի մէջ է գտնվում կրօնը, այդ գիտեն ամենքը, ովքեր ընդունակ են ըմբռնելու ներկայի իմաստը և հասկանալու այն տենդենցիան, որ գոյութիւն ունի պօզիտիվ մտածողների առաջնակարգ գլուխներում։

Գիտութեան առաջնակարգ և պրոգրեսիստ մշակները կրօնի և եկեղեցու երեսին շպրտում են գլխաւորապէս այն նախատինքը, թէ կրօնը ժխտումն է, բացասումն է էվօլիւցիայի անդադրում զարգացման ու կատարելագործման օրէնքին և թէ եկեղեցին հալածող ու թշնամի է լուսաւորութեան ու առաջադիմութեան։

Մենք հանգիստ կը թողնենք միւս կրօնները, քանի որ խօսքը քրիստոնէութեան և հայոց եկեղեցու մասին է։

Փառք Արարչին. մենք երկրպագու ենք մի կրօնի, որի հիմնադիրը որպէս մարդկութեան գերագոյն իդէալ մեզ աւանդել է մեր երկնաւոր Հօր նման ամենագէտ և կատարեալ լինելու սրբազան ուխտը։

Չը գիտենք էլ մի գիտնականի կամ մի անաստուածի բերանը կը բացվի այս պատգամի դիմաց պնդելու, թէ քրիստոնէական կրօնը մահվան փականք է դնում յարաշարժ ու շարունակ առաջադիմող մտքի վրա, թէ նա հակառակ է գիտութեան։

Առաջադիմութիւն առանց կատարելութեան և կատարելութիւն առանց գիտութեան հնարաւոր է արդեօք։

Բազմաթիւ են ներկայումս կրօնի և եկեղեցու թշնամիները. նրանք ամենքն էլ աշխատում են [illegible] անել կրօնը և նրա դաւանիքներից պոկած՝ տեքստերի լուսապսակով իրանց գլուխները զարդարել. սակայն եթէ կրօնը և նրա սպասաւորները հանդիսացող եկեղեցին չեն կամենում դուրս շպրտվել պատմութեան ասպարէզից, եթէ նրանք չեն ուզում ձեռքից բաց թողնել ժողովրդին առաջնորդող ղեկը, պէտք է արթուն [illegible] լինեն, խուսափեն քարացումից, յիշելով որ անշարժութիւնը մահ է։

Վտանգի ժամանակ ջայլամի նման գլուխն աւազի մէջ թաքցնելը, կամաւոր կոյր ձևանալը իրան մատնել է նշանակում՝ ինքնասպանութիւնը մահացու մեղք է։

Թող մեր մէջ գտնվեն տակաւին կոյր ցնցոտիասէրներ. թող կրօնական խիզախ մտածողների գրչի անդրանիկ արտադրութիւնները աւերիչ կրակի բոցերին զոհ գնան. թող, վերջապէս, մի անգամ ևս յաղթանակէ բռնի ոյժը ազատութեան դէմ,— մենք դարձեալ հաւատում ենք քրիստոնէական մաքուր, վսեմ ու անդրդուելի գաղափարներից մեր եկեղեցու վերածնութեան համար ծագող բոցավառ արշալոյսին։

Խօսելու և գրելու բաներ շատ կան։ Սակայն մեր նպատակից դուրս է այս նուագ խօսելն այն մասին, թէ հոգեբանական և սօցիալական ինչ անհրաժեշտութիւնից է բղխում կրօնի յաւիտենական նշանակութիւնը, թէ պատմականօրէն ինչ կերպ է կազմակերպվել եկեղեցին և իր ներկայ ձևը ստացել։

Մենք մեր այս երկտողով գալիս ենք միայն մեր թոյլ ձայնը միացնելու Երուանդ վարդապետի հզօր ձայնին և կոչ անելու բոլոր հայ հոգևորականութեան՝ միանալ այս նուիրական հարցի շուրջը և ձայն բարձրացնել յանուն մեր եկեղեցու լայն չափերով բարեփոխութեան անհրաժեշտութեան։

Վայը այն ժամանակին է, երբ եկեղեցին՝ որպէս մի աւելորդ ու այլևս անպէտքացած գործօն հանուր մարդկութեան կուլտուրական և առաջադիմական տարրերի մէջ՝ դուրս կը նետվի և նրա գոյութիւնը ոչ ոքի համար հարկաւոր չի լինի։

Ականջ ունեցողը թող լսէ…

Hovive

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲՈԼԳԱՐԱԿԱՆ ՕՐԷՆՍԴՐՈՒԹԻՒՆԻՑ

Մանուկ Բօլգարիան շատ իմաստուն կերպով օրէնքներ է սահմանել եկեղեցական դասի նիւթական ապահովութեան վերաբերմամբ։

Հարկ չը կայ՝ բացատրելու, որ տնտեսական պայմանները ահագին նշանակութիւն ունեն այս կամ այն անհատի թէ դասակարգի բարոյական և իրաւական դիրքերի ու սահմանների նկատմամբ։

Այնտեղ, ուր անհատի կամ դասակարգի տնտեսական վիճակը անկախ է, անկախ է լինում և նրանց դիրքը։ Այս ճշմարտութիւնը միանգամայն ակներևակի է մանաւանդ հոգևորականների վերաբերութեամբ։

Ուր հոգևորականների առաջ գալը, պաշտօնի տիրանալը կախում չունի ժողովրդից, այլ նշանակվում է հոգևոր, բարձր իշխանութիւնից, ուր հոգևորականի ապահովութեան աղբիւրները կամայական են կամ ժողովրդի իշխանութիւնից դուրս են և կամ բղխում են անկօնտրօլ ու մութ աղբիւրներից—այնտեղ հոգևորականը դառնում է կղեր, կղեր իր ընդարձակ և ոչ համակրելի իմաստով։

Վաղուց է որ հոգևորական դասակարգին իր վայելուչ ու պատշաճ դերում պահելու համար նրանց նիւթական վիճակի մասին զանազան միջոցներ են առաջարկվում. միջոցներ, որոնք համապատասխան լինելով «ձրի առէք և ձրի տուէք» գաղափարին, ապահովեն ընդ նմին նրանց ապրուստն այնպէս, որ լինեն ու մնան իրանց կոչման բարձրութեան վրա, որ ոչ ստորանան մուրացիկի աստիճանին և ոչ գոռոզանան բռնաւորների նման։ Այս զանազան միջոցներից վաղուց իր վրա ուշադրութիւն է դարձրել մի որոշ ռոճիկ նշանակելը։ Բայց ռոճիկի մասին յարուցված վիճաբանութիւնը չէր վճռվել մինչև Բոլգարիայի արած քայլը գոհացուցիչ կերպով։ Ոմանք մերժում էին ռոճիկը, որովհետև դրանով եկեղեցական սրբազան խորհուրդները իբր թէ ստանում են աշխարհական գործերի կերպարանք և մտնում են պետական իշխանութեան տակ, մինչդեռ դրանք պէտք է մնան միշտ զուտ բարոյական-հոգևոր սահմանի մէջ և եկեղեցու ձեռքում, որովհետև եկեղեցու հիմնական կանոնով դրանք իբրև Հոգւոյն Սրբոյ շնորհաբաշխութիւններ, միշտ ձրի մատակարարվեն և կարող են թոյլ տալ միայն յօժարակամ նուէրներ, իբրև մի տեսակ առաքինութիւն, բարեգործութիւն—ողորմութիւն։ Սրա դէմ ռոճկի սիստեմի պաշտպաններն ունեն իրանց հիմնաւոր պատճառները, երբ ասում են թէ նախ՝ յօժարակամ նուէրները հետզհետէ այնպէս պակասում են, որ հոգևորականների նիւթական վիճակը գրեթէ չքաւորութեան է հասնում և երկրորդ՝ այն իսկ պատճառով նոյն սրբազան խորհուրդները և օրինակատարութիւնները, որ պէտք է ձրի մատակարարվեն, դառնում են անպատիւ առուտուրի, սակարկութեան և հազար ու մի տեսակ անվայել անբաւականութիւնների առարկայ հոգևորականների և նրանց ծխականների միջև։ Ահա հէնց այս պատճառի ազդեցութեամբ է, որ քանի գնում է աւելի ու աւելի յաղթող է հանդիսանում ռոճիկը, որ շատ բարեկարգ երկիրներում և զարգացած ազգերի մէջ արդէն ընդհանուր կանոն է դարձել։

Այս խնդրում բոլգարական նորաբողբոջ իշխանութիւնը, որ զարմանալի հսկայական քայլերով է ընթանում իր քաղաքական կեանքի զարգացման մէջ, գտել է մի շատ իմաստուն միջոց, որով բարձվում են բոլոր տարաձայնութիւնները և հիանալի կերպով միանում են հարցի երկու հակառակ կողմերը և հետևաբար հարցը վճռվում է շատ գոհացուցիչ կերպով։ Այդ միջոցն է՝ եկեղեցական սրբազան խորհուրդների և օրինակատարութիւնների համար դնել ժողովրդի վրա օրէնքով որոշված նուէրը, հասոյթը յօգուտ ծխական եկեղեցու և այդպիսով հաւաքված գումարներից նոյնպէս օրէնքով որոշված տարեկան ռոճիկ յատկացնել հոգևորականներին։ Այսպիսով ժողովուրդն իր նուէրները, իր հասոյթները տալիս է ոչ թէ քահանային կամ հոգևորականին, այլ եկեղեցուն. տալիս է ոչ թէ անձին, այլ հաստատութեանը, իսկ հոգևորականը, քահանան ձրի, առանց դրամ ստանալու մատակարարելով սրբազան խորհուրդները և օրինակատարութիւնները՝ իր ապրուստը ստանում է եկեղեցու սնդուկից, գանձանակից ըստ նախնի առաքելական սովորութեան։ Այս միջոցի առաւելութիւնները կայանում են նրա մէջ, որ նախ՝ հոգևորականը դուրս է գալիս այժմեան անորոշ դրութիւնից. նա չը գիտէ թէ նոյն ամսում կամ տարում ինչքան եկամուտ կունենայ, որպէսզի նրա համեմատ տնօրինէ իր ծախսերը. երկրորդ՝ նա այլևս հարկ չի ունենայ որսորդի նման այս կամ այն կողմ նետվել մի քանի կոպէկ գտնելու, ձեռք գցելու համար. երրորդ՝ նա կընտելանայ պատուաւոր կերպով իր պաշտօնի համար իր հասոյթը ստանալու ուղիղ և օրինաւոր ճանապարհին, այլևս ձեռք վերցնելով իր լեզուն, իր կարգը, իր դիրքը, իր խաչ ու մաշտոցը կարելոյն չափ աւելի դրամ կորզելու միջոց ծառայեցնելուց և չորրորդ՝ բոլորովին կը վերանան անվայել ու տձև պահանջներն ու անբաւականութիւնները հոգևորականների և ժողովրդի միջև։

Ի նկատի առնելով այս միջոցի բոլոր օգտակարութիւնը, հարկաւոր ենք համարում աւելի ընդարձակօրէն ծանօթացնել մեր ընթերցողներին բոլգարական այս օրէնքի հետ։

Ժողովուրդը բաժանվում է առանձին կարգերի—ծխերի, ուր իւրաքանչիւր ծխական եկեղեցու գործերը վարում է նոյն ծխի միջից ընտրված ծխական հոգաբարձութիւնը, բաղկացած 2 կամ 3 անդամից գիտութեամբ և հաւանութեամբ վիճակաւոր առաջնորդի (յօդ. 1 և 2)։

Ծուխը պէտք է բաղկանայ ոչ պակաս 150 և ոչ աւել 200 տնից (յօդ. 4)։ Մի քահանայ չէ կարող ունենալ մի եկեղեցուց—մի ծխից աւելին (յօդ. 5)։ Ծխերը բաժանվում են երեք տեսակի—առաջին, երկրորդ և երրորդ։ Առաջին տեսակին պատկանում են առաջնորդանիստ քաղաքների մայր եկեղեցիները (մի-մի հատ), երկրորդին՝ քաղաքների եկեղեցիները և երրորդ տեսակին՝ գիւղական եկեղեցիները (յօդ. 5, 8)։ Քահանաները ստանում են տարեկան ռոճիկ—առաջին տեսակի եկեղեցու քահանաները 2400-ական ֆրանկ, երկրորդ տեսակի քահանաները՝ 1800 ֆր. և երրորդ տեսակինը՝ 1200 ֆրանկ։ Սարկաւագները ստանում են՝ մայր եկեղեցիներինը 1200 ֆր., իսկ միւս եկեղեցիներինը՝ 1000 ֆր.։ Երգիչները և եկեղեցու միւս սպասաւորները ստանում են իրանց վարձատրութիւնը համաձայն իրանց առանձին համաձայնութեան հոգաբարձութեան հետ (յօդ. 9)։

Եկեղեցու արդիւնքներն են՝ ա.) Եկեղեցապատկան կալուածքների եկամուտները, բ.) Դրամագլուխների տոկոսները, գ.) Գերեզմանատների արդիւնքները, դ.) Յօժարակամ նուէրները, ե.) Մոմավաճառութեան արդիւնքը և զ.) Եկեղեցական օրինակատարութիւններից ստացվող հասոյթները։ Օրինակատարութիւնների վարձ նշանակված է հետևեալ կերպով. պսակի համար 10—40 ֆրանկ, մկրտութեան՝ 1—5 ֆր., ծննդականի համար ջուր օրհնելու (տուն փարատելու) 30 ս.—1 ֆր., քառասնօրէի 50 ս.—3 ֆր., մեծի թաղման 5—40 ֆր. տղայի թաղման 1—20 ֆր. (յօդ. 10)։

Այս օրինակատարութիւններից գոյացած բոլոր եկամուտները մտնում են եկեղեցու գանձարանը. ոչ քահանան և ոչ այլ ոք իրաւունք չունի դրանց համար ոևէ վարձ պահանջել ժողովրդից. իսկ միւս տեսակ օրէնքների համար, որը կատարում է քահանան բարեպաշտ անձերի խնդրով—օրինակ՝ տուն օրհնէք, գերեզման օրհնէք, բժշկութեան կամ երկարակեցութեան մաղթանք, ննջեցեալների վրա սաղմոս կարդալ և այլն—կարող են ստանալ իրանք հոգևորականները անմիջապէս։ Միւս կողմից, եթէ ծխականներից մէկը օրինակատարութիւնների համար հրաւիրէ ուրիշ քահանաներ ևս—պէտք է նրանց առանձին վարձատրէ (յօդ. 13)։

Արգելվում է մեղրամոմի մասնաւոր առևտուրը։ Մեղրամոմ թափելու համար ամեն մի թեմ—վիճակ ունենում է իր մոմի գործարանը, որը գտնվում է ուսումնարանական վարչութեան հսկողութեան տակ և սրա՝ գործարանի արդիւնքը պատկանում է թեմական դպրոցին (յօդ. 12)։

Եկեղեցու արդիւնքներից հանվում են հետևեալ ծախսերը՝ 1) վառելիք ձէթ, մեղրամոմ, 2) հոգևորականների ռոճիկները, 3) եկեղեցու և սրա անշարժ կալուածքների կարկատանը և նորոգութիւնը և 4) եկեղեցական կարևոր կահ-կարասին ու այլ պարագաները (յօդ. 14)։

Եթէ եկեղեցու արդիւնքը բաւական չէ առաջին երեք տեսակ ծախսերի համար, եկեղեցական հոգաբարձութեան թոյլ է տրվում հարկ սահմանել ծխական ժողովրդի վրա փողով կամ բնական տուրքերով. այս տուրքերը ժողովում է տեղական հասարակական վարչութիւնը (յօդ. 15)։

Եթէ եկեղեցու արդիւնքներից վերոյիշեալ բոլոր ծախսերը հանելուց յետոյ մնում է յաւելուած, սրա $^2/_3$ մասը տրվում է տեղական ծխական դպրոցին, իսկ $^1/_3$ մասը կազմում է եկեղեցու համար մայր գումար (յօդ. 16)։

Վիճակի գործերը կառավարելու համար իւրաքանչիւր մի առաջնորդ ունի՝ 1) դիւանատուն, որ բաղկանում է մի քարտուղարից և երկու սարկաւագից, որոնք սպասաւորում են առաջնորդին և վարում են դիւանատան մէջ գրագրութեան պաշտօն և 2) խորհուրդ կամ ատեան բաղկացած չորս քահանայից, ընտրված առաջնորդանիստ քաղաքի քահանաներից (յօդ. 17)։ Եպիսկոպոսի դիւանատունն է միևնոյն ժամանակ և առաջնորդական ատենի դիւանատուն (յօդ. 18)։ Ատեանն ունի վարչական և դատաստանական պարտաւորութիւններ (յօդ. 19)։ Քարտուղարն ստանում է տարեկան 2400 ֆր., իսկ գործավարները (գրագիր) մարդագլուխ 1200 ֆր. (յօդ. 20)։ Քահանաները պարտաւոր են ներկայ լինել ատեանի նիստերին շաբաթական մի անգամ և ստանում են մարդագլուխ 4 ֆր. ամեն մի նիստի համար, որը շարունակվում է 8—12 ժ. առաւօտը և 2—6 ժ. կէսօրից յետոյ (յօդ. 21)։ Ատեանի մէջ եղած ժամանակ քահանաների ծխական պարտաւորութիւնները կատարում են ուրիշ քահանաներ կամ անվարձ և կամ 2 ֆր. վարձով (յօդ. 22)։ Դիւանատան և ատեանի ծախսերի համար նշանակվում են առանձին աղբիւրներ, որոնց յաւելուածը յանձնվում է տեղական գանձարանին (արքունի), իսկ հաշուի ցուցակը ներկայացվում է արտաքին գործերի դաւանութեան մինիստրութեան (յօդ. 23)։

Նմանօրինակ կարգ ու կանոններ հաստատում է բոլգարական օրէնքը նաև մահմեդականների ու հրէաների համար։

Այս օրէնքները հրատարակված են Բոլգարիայում սրանից 28—29 տարի առաջ։

Որքան մեզ յայտնի է, ամբողջ Ռուսաստանի մէջ միայն Բաթումի համայնքն է, որ աւելի քան տասը տարի ընդունել ու գործադրել է քահանաներին ռոճիկ տալու այս օրինակը առաւել կատարելութեամբ։

---

*) Երուանդ վ.-ի յօդուածի առթիւ թէր և դէմ գրուածներին տեղ ենք տալու։ Ծ. Խմբ.

Եւ այս կատարելութիւնը կայանում է նրանում, որ ոչ մի արարողութիւն, ինչպէս և տնօրհնէք, գերեզմանօրհնէք նայլն չէ թողնված քահանաներին, այլ ամէն տեսակ հասոյթ, որ կատարված որևէ արարողութեան համար վճարվում է, մըտնում է եկեղեցու գանձարանը: Նոյնիսկ այն դպրոցների կրօնուսուցչութիւնը, որ կատարում է քահանան, ինչ ռոճիկ որ ստանում է, այս ռոճիկն էլ մտնում է եկեղեցու գանձարանը: Այնպէս որ քահանան կատարում է իր քահանայական պաշտօնի հետ կապված բոլոր տեսակ պարտաւորութիւնները և այդ ամէնի համար սահմանված տուրքերն ու հասոյթները մըտնում են եկեղեցու գանձարանը, իսկ այդ գանձարանից նա ստանում է իր որոշ ռոճիկը:

Որքան և գեղեցիկ է տեսնել մեր կեանքի մէջ սկիզբ դրած այս օրինակը, այնքան և ցաւալի է ասել, որ, ինչպէս մեր ականջին են հասնում, Բաթումի Թայֆայականութիւնը, անձնական գծուծ հաշւով շնչող մարդուկները և գեղեցիկ գործի թշնամիները միացած են տապալելու այն: Եւ շատ էլ անհաւատալի բան չէ: Քանի որ մեր հասարակութիւնները լուսամիտ չեն լաւ քայլերն ու սկսուածքները քաջալերելու և ամուր հիմքերի վրա հաստատելու, պէտք է հրաշքի վերագրել այն հանգամանքը, որ այդ օրինակը Բաթումում 10 տարի կեանք է ունեցել: Ասել թէ Բաթումի հայ հասարակութիւնը բացառիկ զարգացած ու լաւ գործերը գնահատող է՝ չենք կարող:

Բարոյական բոլոր հիմունքները ոչ մի արժէք չունեն բարոյականի արժէքը չը հասկացող անձերի համար. անհրաժեշտ է, որ պետական օրէնսդրութեան բովից անցնել տրվի քահանաների ռոճկի աւչութեան սիստեմը, որ տևական լինի և հաստատուն:

Ո՞ւր էր թէ բուլղարական օրէնքի համակրելի սահմանումները մեր կեանքի մէջ ևս հաստատուն գործադրութիւն գտնէին:

Ա. Մ.

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԻՑ

Հայ զօրավար Զօհրապը.—Եգիպտական թերթերը մանրամասնութիւններ կը պարունակեն սըր Եդուարդ Զօրապ հայ զօրավարին մահուան նկատմամբ: Շատերու պէս երևակայական զօրավար մը չէր հանգուցեալը, այլ զօրաբաժնի հրամանատար մըն էր և Եգիպտոսի պատերազմական մինիստրութեան խորհրդականի պաշտօնը կը վարէր: Անգլ. հպատակ էր և եգիպտական բանակին մէջ անցուց իր բոլոր ասպարէզը, մասնակցելով Սուդանի բոլոր պատերազմներուն: Կիսաբաժնի զօրավար էր, երբ վերջերս հանգստեան կոչուեցաւ զօրավարի պատուակալ տիտղոսով: Հազիւ թէ Պարիզէն վերադարձաւ, երբ յանկարծական մահը վերջ տուաւ իր կեանքին: Յուղարկաւորութիւնը խիստ շքեղ կերպով տեղի ունեցաւ: Խդիվին ներկայացուցչին հետ ներկայ էին իշխաններ, զօրավարներ և սպաներ: Դագաղը ծածկուած էր օսմանեան դրօշով: Ամեն զօրաբաժիններէ գումարտակներ իրենց նուագախումբերով կը մասնակցէին դագաղին, որ թնդանօթի կառքի մը վրայ դրուած էր: Թաղումին միջոցին զօրքերն 300 հրացան պարպեցին և թնդանօթի 11 հարուած արձակուեցան: («Բիւզ.»)

Հայկական կօլլէժ Կիլիկիայի մէջ.—Այնթապի երիտասարդութիւնը յղացել և սկսել է իրագործել մի բարձր վարժարան՝ կօլլէժ հիմնելու միտքը: Այդ քաղաքի մէջ գոյութիւն ունեցող երկու կրթական հաստատութիւններ, Վարդանեան և Ազենական, միանալով, իրանց ունեցած 1500 ոսկի դրամագլուխը յատկացրել են այդ գործին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Ալբանացիների պահանջները.—Վերջերս մամուլի մէջ յաճախ լուրեր էին պտըտում Ալբանիայում տեղի ունեցած յուզմունքների, պատրաստվող ապստամբութեան մասին և այլն, սակայն յուզմունքի պատճառը անբացատրելի էր մնում: Յունվարի 24-ին, որպէս հաղորդում են «Ֆիգարօ» լրագրին, սուլթանի կառավարութեանը, թիւրքաց պարլամէնտին և պետութիւնների ներկայացուցիչներին յանձնվեց Հիւսիսային Ալբանիայի ալբանացիների յիշատակագիրը, որից երևում է, որ ալբանացիները երկիւղ են կրում իրանց վիճակի համար՝ որպէս ժողովրդի և իրանց հայրենիքի՝ Ալբանիայի համար, որին, նրանց կարծիքով, սպառնում է գրաւումն օտարների կողմից:

«Բօսնիայի և Հերցէգովինայի միացումն և սահմանադրական Թիւրքիայի սկսած առևտրական բանակցութիւնները Աւստրիայի հետ հաստատում են մեր երկիւղները: Վախենալով Հաբսբուրգների զօրքերի ներսխուժումից Թաշլիջէի (Նօվի-Բազար) կողմից, մենք, լեռնական ալբանցիներս, հաւաքվեցինք և կազմեցինք մեր ազգային ժողովը նախ և առաջ պաշտպանելու մեր եղբայր-կաթօլիկների բողոքները, որոնք անարդար կերպով զրկված են իրանց ներկայացուցիչներն ունենալու իրաւունքից թիւրքաց պարլամէնտում»:

«Հասուն քննութիւնից յետոյ» ալբանացիները որոշեցին պահանջել իրանց համար սուլթանից և պարլամէնտից հետևեալ իրաւունքները, որոնք նպատակ ունեն ամրապնդել օսմանեան կայսրութեան վեհութիւնը և մի անգամ ընդմիշտ ապահովել որևէ պատահականութիւնից ալբանացիների ազգային և տնտեսական գոյութիւնը:

1) Ալբանական ազգութեան պաշտօնական ճանաչումն:

2) Պարտադիր ուսուցումն ալբանական լեզուով Ալբանիայի բոլոր դպրոցներում (Ուսկիւբում, Սկիւտարիում, Եանինայում և Մօնաստիրում):

3) Ալբանական լեզուի պաշտօնական ճանաչումն այդ վիլայէթներում:

4) Բոլոր ալբանացիների համար պարտադիր զինուորագրութիւն, առանց կրօնի խտրութեան, սակայն միայն Ալբանիայի սահմաններում:

5) Կայսերական կառավարութիւնը իրաւունք չունի որևէ կօնցէսիա տալ Ալբանիայում առանց շրջանային խորհրդի թոյլտուութեան:

6) Շրջանի ընդհանուր նահանգապետը պէտք է ալբանացի լինի:

7) Ալբանական բիւջէից ամենից առաջ պէտք է ծածկվեն վարչութեան, հասարակական աշխատանքների, ժողովրդական լուսաւորութեան, դատանութիւնների և ժողովրդական առողջապահութեան ծախսերը:

Ալբանացիները հաւատացած են, որ նրանց արդար պահանջներին բաւարարութիւն կը տրվի, եթէ սուլթանը, նրա մինիստրները և պարլամենտը պատշաճաւոր կերպով հասկանան պետութեան շահերը:

Ստորագրված է, ալբանական ազգային ժողովի և ալբանական վերածնութեան ազգային կօմիտէտի անունից, առանձին լիազօրութեամբ, ալբանական «Կօմբի» բարձրագոյն կօմիտէտի նախագահ պրինց Գիկա: Տրված է 1909 թ. յունվարին, Ալբանիայի լեռներում:

ԱՄԵՐԻԿԱ

Աբրահամ Լինկօլնի ծննդեան հարիւրամեակը.—Փետրվարի 12-ին (ն. տ.) Ամերիկայի Միացեալ-Նահանգները տօնել է իր մեծ քաղաքացիներից մէկի՝ Աբրահամ Լինկօլնի ծննդեան հարիւրամեակը: Տարեդարձի օրը ամբողջ երկրում կազմակերպվել են միտինգներ, ուր խօսել են երկրի ամենայայտնի քաղաքական գործիչները: Միայն Նիւ-Եօրկում տեղի են ունեցել 600 միտինգներ: Կենտուկկի նահանգի Գօջենվիլ քաղաքից երեք մղոն հեռու անտառի մէջ գտնվող այն խրճիթում, ուր ծնվել էր Լինկօլնը, արձան է կանգնեցված, որի հանդիսին ներկայ է եղել և ճառ է արտասանել Րուզվելտը:

Վաշինգտօնում հանդիսաւոր մաղթանքին ներկայ են եղել պարլամենտի բոլոր անդամները: Աղօթքից յետոյ կարդացել են Լինկօլնի այն ճառը, որը արտասանել է նա քաղաքացիական պատերազմի ժամանակ Գիտտիսբուրգի մօտ: Ինչպէս յայտնի է, Լինկօլնը, որի նախագահութեան միջոցին սկսվեց քաղաքացիական պատերազմը հարաւի հետ, պատկանում է Ամերիկայի ամենահռչակաւոր գործիչների թւին, ինչպէս է Վաշինգտօնը, Ֆրանկլինը և այլն:

Նեգրերի ազատագրութեան գաղափարի ջերմ պաշտպանութեան համար նա զոհ գնաց հակառակորդների վրէժխնդրութեանը՝ սպանվելով մի մոլեռանդի ձեռքով:

Բայց այսօր այդ նահատակ նախագահի ծննդեան հարիւրամեակը դարձել է համազգային մի տօն Ամերիկայի համար:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳ. ԳՈՐԾ.

18 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Բացվեց ավիւական միացեալ ըՙկերութիւնների լիազօրների համագումարը: Նախագահում է Դումայի անդամ Բօբրինսկի 1-ինը:

ԿԻԵՎ: Հարաւ-արևմտեան հողատէրերի համաժողովը անհրաժեշտ գտաւ բաժանել գաւառական հողային բարեկարգութեան գաւառամասերը և զէմստվօ մտցնել: Համագումարը փակվեց:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Առևտրական դատարանը սնանկ յայտարարեց երկաթագործական և մետաղաձուլական Եկատէրինօսլաւի ընկերութեանը: Պարտքը հասնում է կէս միլիօնի:

Դատաստանական պալատում սկսվեց պետական բանկի մէջ կատարված դրամական զեղծումների գործի քննութիւնը: Մեղադրվում են գրասենեակի հաշւապահ Սմիրնովը և գանձապահ Սօկօլօվը: Վատնած գումարի քանակը հասնում է 300,000 ր.:

Փոխ-ծովապետ Վիրէնը նշանակվում է Կրօնշտադի նաւահանգստի գլխաւոր հրամանատար և զինուորական նահանգապետ:

Նօվօրօսիյսկի համալսարանի գործի առիթով դատարանը հարցաքննեց վկաներից մի քանիսին:

ՕԴԵՍՍԱ: Ջիւնը արագութեամբ հալվում է: Քաղաքի հեռաւոր թաղերի տների ներքին յարկերը ջրի մէջ են մնացել: Հաղորդակցութիւնը դադարեց:

ՄՕՍԿՎԱ: Նահանգական զէմստվային ժողովը որոշեց վերստին վերաքննել Տօլստօյի և Տուրգենեվի անունով գրադարաններ բանալու մասին կայացված որոշումը և վերստին միջնորդութիւն յարուցել մինիստրի առաջ:

ԲԵՐԼԻՆ: Լանդտագին մի օրինագիծ ներկայացվեց գերբային դրոշմատուրքերը աւելացնելու մասին, նպատակ ունենալով այդ ճանապարհով ծածկել 16 միլիօն մարկ դեֆիցիտը:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԽԱՄԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱԽԱՄԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Մ. ՏՈՒՐԲՕՎԻՉ—1½—2 ժ. մանկաբարձութեան:
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Օ. Վ. ԳԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ, առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ:
Հիւանդների ընդունելութիւնը { 12—1 առաւօտեան / 5—6 երեկոյեան
Միքայէլեան փող., № 36, տ. Ճավճանիձէի:
100—97

ԲԺԻՇԿ
Ա. Մ. ԱՄԻՐԽԱՆԵԱՆ
Ներքին հիւանդութիւններ
Ընդունելութիւն ամեն օր { 11—12 ժ. առաւ. / 5—6 ժ. երեկ.
Վելիամինօվսկայա փող., № 10.
(օ. մ.) 100—52

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Սիֆիլիս, վեներական, միզասեռական եւ մորթու ցաւեր
Ընդունելութիւն ամեն օր } 12—2 ժ. ցեր. / 5—7 ժ. երեկ.
Սօլօլակ, Բէհբութեան փողոց № 33.
(օ. մ.) 100—49

ԲԺԻՇԿ
Ա. Ա. ԽԱՆԴԱՄԻՐԵԱՆ
Արտասահման մեկնելու պատճառով, հիւանդների ընդունելութիւնը ընդհատված է:
(օ. մ.) 50—42

ՀՐԱՒԷՐ

Ըստ յանձնարարութեան Թեմակալ բարձր սրբազան առաջնորդի Թեմիս՝ ամսիս 22-ին առաւօտեան 11 ժամին Կաթուղիկէ ս. Աստուածածին (Մէյդանի) եկեղեցում լինելու է ծխականների ընդհանուր ժողով՝ երեսփոխան և հաշւետեսներ ընտրելու և տնտեսական մի քանի խնդիրների վերաբերութեամբ խորհրդակցելու համար: Ուստի սրանով հրաւիրում եմ յիշեալ եկեղեցու մեծ պ. պ. ծխականներին, որ նշանակված օրը և ժամին շտապեն եկեղեցի՝ ժողովին մասնակցելու:

Գործակալ ա. մ. Թիֆլ.՝ Գրիգոր աւագ քահանայ Մանդակունի

Լոյս տեսաւ և վաճառվում է
,,ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ‘‘ գրավաճառանոցում
«ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՅԵԼՉԱԳՐՈՒԹԻՒՆ»
կազմ. Գ. Լևոնեան (հիմնադիր Գեղարուեստական Կուրսերի): Տետրակները յարմարեցված են դպրոցների և ընտանիքների համար: Կան նմուշներ ֆրանսերէն և ռուսերէն տառերի՝ հարթակարի համար: Գինն է՝ կազմած և պօստի ծախքով՝ 1 ր. 20 կ.: Գաւառացիները կարող են ուղարկել պօստի մարկաներ: Դիմել՝ Г. И. Галустяну Книжный магазинъ Гуттенбергъ, Тифлисъ.

Մանկաբարձուհի եւ մասսաժիստ
Հ. ՍԱՆԹՈՒՐԵԱՆ-ԴԱՒԹԵԱՆՑԸ
Ընդունում է ծնունդներ և բժշկում է բժշկի խորհրդով կանացի հիւանդութիւններ, սրսկում է կանանց, տղամարդկանց և երեխաների կաշուի տակ թէ իր և թէ հիւանդների մօտ մատչելի գնով: Գաւառացիներին տալիս դիւրութիւն և խորհուրդներ կանանց հիւանդութիւնների վերաբերմամբ:
Ընդունելութիւնը ամեն օր ժամը 12—1-ը, իսկ կիրակի օրերը պատուաստում է ծաղիկ: Հասցէն՝ Петхаинскій подъемъ № 4, д. Симонянца.
(ե. հ. կ.) 51. 50—15

Հարկաւոր է
ՄԻ ՀՄՈՒՏ ԵՒ ՓՈՐՁԱՌՈՒ ՀԱՇՒԱՊԱՀ
(իտալական կրկնատոմար) անտառային գործերի համար, Բաթումի շրջակայքում: Ցանկալի է վրացերէնի ծանօթ անձնաւորութիւն: Ցանկացողները թող դիմեն՝ Батумъ, Т/Д. Бр. Чилингиріанъ.
(ա. օ.) 134. 6—4

Պահանջեցէք ամեն տեղ **,,ՕԴՕԲՐԻՆ‘‘**
Միայն ՄԻԽԱՅԻԼ ԼԵԲԷԴԵՎԻ «Этикетъ утвержденъ прав.» մակագրութեամբ.

Գլխաւոր պահեստատեղը Դեղագործական Ապրանքների Վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բագու, Բաթում:
(10, 20, 30) 50—36

Садовое заведеніе ,,НИКОЗИ‘‘
Պտղատու ծառերի տնկարաններ
Ս. Ս. ԽԵՏԱԳՈՒՐԻ
,,ՆԻԿՕԶԻ‘‘ կալուածքում
(Գօրու գաւառ, Թիֆլիսի նահանգում)
Վաճառվում են
խնձորենու, տանձենու, դեղձի, կեռասի և ուրիշ արտասահմանեան ամենալաւ տեսակների պատուաստած տունկեր: Ցուցակները ըստ պահանջի ուղարկվում են ձրի:
Հասցէն՝ Тифлисъ, Сололакская 15. С. С. Хетагури.
(հ. կ.) 101. 10—7

ВѢРНО 1ЫЙ СОРТЪ
И. ШТРУМ ФЕЛЬДЪ
ВАР ШАВА

ՄՕԴԱՅԻՆ, ԳՈՐԾՆԱԿԱՆ, ՍԻՐՈՒՆ
Ստուգված են միայն պատէնտ ունեցող մեր «ԴԵԿԱԴԱՆՍ» ժամացոյցները:
Տղամարդկանց այդ բաց ժամացոյցները երևակ. մեդալական ցիֆէրբլատով, ընթացքը քարերով, քոքվում է առանց բանալիի 40 ժամը մի անգամ: Ժամացոյցի կորպուսը ամենատափակն է մետալից հին արծաթի նման դրոշմված զանազան նկարներով (նայիր նկարը): Երբեք չեն կորցնում իրանց սկզբնական տեսքը: Շնորհիւ ահագին վաճառքի, մենք հնարաւորութիւն ունենք ծախել ամենաէժան գնով. միայն 3 ր. 50 կ., իսկ 2 հատը 6 ր. 50 կոպէկով: Կանանց նոյնպիսի ժամացոյցներ 4 ր. 50 կոպէկով:
ՄԵՐ ԽՈՐՀՈՒՐԴՆ է. Բերել տուէք միայն «Դէկադանս» ժամացոյցը և դուք միշտ շնորհակալ կը մնաք մեզանից: Ուղարկում եմ մինչև բօլէները ստուգված ժամացոյցները վերադիր վճարով և առանց կանխավճարի, երաշխաւորելով ժամացոյցի ընթացքի ճշտութիւնը և մետալի ամրութիւնը 6 տարով: Մինչև 4 հատի առաքումը 40 կ. (Սիբիր 75 կ.): Նոր ոսկէ շղթաներ բրէլօկով 75 կ. և 1 50 կ. հատը, երկճիւղ շղթան 2 ր. 50 կ. և 3 ր. 50 կ.: Հասցէն. И. Штрумфельдъ. Варшава, Св. Креста № 48. отдѣл. 23.
(յ. 9, 31, փ. 6, 20, մ. 6, 20) (66705) 2. 6—4

ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ
„ՊՐՕՎՕԴՆԻԿ“
ԱՐՏՕՆՎԱԾ
Ամենալաւը աշխարհում

Ամենատոկուն և ամենաբարձր ամրութեան, լաւ յատկութեան, չքեղ ֆասոնների և ամենալաւ գործածվող նիւթերից: Անպայման երաշխաւորութիւն իւրաքանչիւր զոյգի անօրինակ ամրութեան:
1888



ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ
ՊՐՕՎՕԴՆԻԿ
Ֆաբրիկային պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ
Սօլօլակսկայա փող., 4.
ՀԱՏՈՎ ԵՒ ՄԵԾԱՔԱՆԱԿ ՎԱՃԱՌՔ
(20, 24, 27. մար. 3, 6, 10, 13, 17, 20, 24, 27, 31) 144. 12—1

Электропечатня Н. Г. Аганьянцъ Полицейская 7